



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՒԱՔԵԱԼ

ի քրիստոնեական վարդապետության
Քեղարմինոսի եւ սյրոց:

ԺԱ. ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՅԱՒԵԼՈՒՍԺՈՎՔ

Ի ՊԷՏՍ ԱՏՈՐԻՆ ԴԱՍՈՒ

Ի ՎԻՆՆԱ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1904.

1
579

20

Chh.

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԱՆՈՒՅԵԱԼ

*ի քրիստոնէական վարդապետութենէ Քերպուրի-
նոսի եւ այլոց:*

ԺԱ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԱՆԵՂՈՒՍԺՈՎ

Ի ՊԷՏՍ ՍՏՈՐԻՆ ԴԱՍՈՒ



Ի ՎԻՆՆԵԱ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1904.

Հ Ա Ս Ա Ռ Օ Ց

Ք Ր Ի Ս Ց Ո Ն Է Լ Կ Ա Ն Վ Ա Ր Գ Ա Պ Ե Ց Ո Ի Թ Ի Ի Ն

Գ Լ Ո Ի Խ Ա .

Յաղագս Գրիգորյանեայ անուան :

Հ. Գու ի՞նչ ես հաւատարով :

Պ. Քրիստոնեայ եմ շնորհօքն քրիստոսի :

Հ. Ի՞նչ բանով քրիստոնեայ ես եղեր :

Պ. Հաւատարով ի քրիստոս եւ մկրտու-
թեամբ սուրբ աւազանին :

Հ. Քրիստոնէին նշանը ո՞րն է :

Պ. Սուրբ խաչն է :

Հ. Խաչակիքէ զքեզ որ տեսնեմ :

Պ. †Յանուն Հօր, եւ Որդւոյ, եւ Հոգւոյն
սրբոյ. ամէն :

Հ. Քանի՞ բան պէտք է քրիստոնէին
փրկուելու համար :

Պ. Չորս բան պէտք է, այսինքն Հաւատք,
Յոյս, Սէր եւ Բարեգործութիւն :

Հ. Ո՞րն է քրիստոնէին հաւատքը :

Պ. Այս երկու բանիս հաւատաւն է, նախ
երրորդութեան, այսինքն, հաւատաւ թէ Աս-

ԱՅ



1-879 աե

տուած մէկ է, եւ երեք անձն ունի. երկրորդ՝ Մարդեղութեան, այսինքն Հաւատալ թէ Որդին Աստուած մեզի համար մարդ եղաւ, եւ խաչին վրայ մեռաւ:

Հ. Ի՞նչ բանով կրնանք սորվել այս սուրբ Հաւատքս:

Պ. Հասարակին խօսքերովը, որ Հասարակ հանգանակ ալ կ'ըսուի, զոր Քրիստոսի տասուերկու առաքեալները շարդերեցին, եւ սուրբ Ժողովքները ճոխացուցին:

Հ. Ըսէ Հաւատամքն որ տեսնեմ:

Պ. Հաւատամք ի մի Աստուած Հայրն ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից: Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ. ծնեալն յԱստուծոյ Հօրէ, միածին, նախ քան զամենայն յաւիտեանս: Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ. եւ ոչ արարած: Կոյն ինքն համագոյակից Հօր, որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթք: Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով: Որով էառ մարմին, հոգի, միտս, եւ զամենայն որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս եւ ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յեր-

րորդ աւուր յարուցեալ, ելեալ յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս. որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան: Հաւատամք եւ ի սուրբ Հոգին յանեղն եւ ի կատարեալն, որ ի Հօրէ եւ յՈրդոյ բղխի. որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յաւետարանս, որ էջն ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն, եւ բնակեցաւ ի սուրբսն: Հաւատամք եւ ի մի միայն յընդհանրական եւ յառաքելական սուրբ Եկեղեցի: Ի մի մկրտութիւն. յապաշխարութիւն ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց: Ի յարութիւն մեռելոց: Ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց: Յարքայութիւն երկնից: Եւ ի կեանն յաւիտեանականս. Ամէն:

ԳԼՈՒԽ Բ.

Յաւոյն Աստուծոյ կամ սուրբ երբրորդութեան:

Հ. Աստուած ի՞նչ է:

Պ. Ընհուն էակ մի է անմարմին, ստեղծող երկնի եւ երկրի եւ ամէն բանի:

Հ. Աստուած ամէն բան կը տեսնէ՞ եւ գիտէ:

Պ. Եւ յո՞, վասն զի ամենագէտ է, եւ կը տեսնէ միանգամայն անցեալը, ներկան ու ապագան եւ մեր ծածուկ խորհուրդները:

Հ. Աստուած ամէն բանի կարօղ է:

Պ. Այո՛, վասն զի ամենայն ինչ կրնայ ընել, ստեղծել եւ յառաջ բերել՝ ինչ որ անկարելի չէ. եւ ասոր համար կ'ըսուի Աստուած ամենակալ:

Հ. Աստուած յաւիտենակա՞ն է:

Պ. Այո՛, վասն զի ինք միշտ եղած է, եւ ո՛չ սկիզբ ունեցած է, ո՛չ ալ վերջ պիտի ունենայ:

Հ. Աստուած ո՞ր է:

Պ. Ամէն տեղ է, այսինքն յերկինս, յերկրի, ի դժոխս, եւ այլ ամէն տեղ:

Հ. Յերկինս ի՞նչպէս է:

Պ. Մեծ թագաւորի մը պէս է:

Հ. Յերկրի ի՞նչպէս է:

Պ. Մեծ առաջնորդի մը եւ հօր պէս է:

Հ. Ի դժոխս ի՞նչպէս է:

Պ. Սաստիկ դատաւորի մը պէս է:

Հ. Թէ որ Աստուած ամէն տեղ է, ուրեմն հո՞ս ալ է:

Պ. Այո՛, հոս ալ է:

Հ. Թէ որ հոս է նէ՛ ինչո՞ւ չենք տեսներ:

Պ. Ասոր համար, վասն զի անմարմին է եւ չ'երեւար:

Հ. Ձքեղ ո՞վ է ստեղծեր:

Պ. Աստուած:

Հ. Ինչո՞ւ համար է ստեղծեր:

Պ. Ասոր համար է ստեղծեր, որ զինքը ճանչնամ, սիրեմ, պաշտեմ, եւ երբ որ մեռնիմ արքայութիւն երթամ:

Հ. Աստուած քանի՞ է:

Պ. Մի միայն է:

Հ. Անձը քանի՞ է:

Պ. Երեք է, որուն սուրբ Երրորդութիւն ալ կ'ըսենք:

Հ. Անուններն ի՞նչ է:

Պ. Հայր Աստուած, Որդի Աստուած եւ Հոգի սուրբ Աստուած:

Հ. Հայր Աստուած է:

Պ. Այո՛, Աստուած է:

Հ. Որդին Աստուած է:

Պ. Այո՛, Աստուած է:

Հ. Հոգին սուրբ Աստուած է:

Պ. Այո՛, Աստուած է:

Հ. Ուրեմն երեք Աստուած է:

Պ. Կ'ա՛ւ լիցի, երեք անձինք, եւ մէկ Աստուած է:

Հ. Երեք անձանց ո՞րը մեծ է, ո՞րը պզտիկ է:

Պ. Երեքն ալ հաւասար են. մեծ ու պզտիկ չկայ մէջերնին:

Հ. Ինչո՞ւ համար հաւասար են:

Պ. Ասոր համար՝ որ երեքն ալ մէկ Աստուած են, եւ մէկ բնութիւն, մէկ Աստուածութիւն, մէկ կարողութիւն եւ մէկ իշխանութիւն ունին:

Հ. Հայր Աստուած ուսկի՞ց է:

Պ. Իրմէն է ի յաւիտենից, եւ ուրիշէն չէ:

Հ. Որդին Աստուած ուսկի՞ց է:

Պ. ՅԱստուծոյ Հօրէ ծնած է ի յաւիտենից:

Հ. Հոգին սուրբ Աստուած ուսկի՞ց է:

Պ. ՅԱստուծոյ Հօրէ եւ յՈրդւոյ ելած եւ բղխած է ի յաւիտենից:

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս Մարդեղանիւն Որդւոյն Աստուծոյ:

Հ. Այս երեք անձանց ո՞րը մարդ եղաւ կամ մարմնացաւ:

Պ. Միայն Որդին Աստուած:

Հ. Ինչո՞ւ համար մարդ եղաւ:

Պ. Սօժեղ սատանային ձեռքէն եւ դժոխքէն ազատելու համար:

Հ. Մարդ եղաւ ըսելն ի՞նչ ըսել է:

Պ. Ըսել է թէ Որդին Աստուած, որ ի յաւիտենից Աստուած էր, ի ժամանակի եկաւ, մեզի համար մարմին առաւ եւ մեզինման մարդ եղաւ:

Հ. Ուսկի՞ց մարմին առաւ եւ մարդ եղաւ:

Պ. Ի Մարիամայ սուրբ կոյս Աստուածածնէն՝ զօրութեամբ Հոգւոյն սրբոյ:

Հ. Ո՞ր օր մարդ եղաւ կամ մարմնացաւ:

Պ. Մարտի ամսոյն 25ին, Աւետման օրը:

Հ. Քանի՞ ամիս մնաց յարգանդի սուրբ Աստուածածնին:

Պ. Ինն ամիս:

Հ. Ո՞ր օր ծնաւ:

Պ. Դեկտեմբեր ամսոյն 25ին:

Հ. Ո՞ւր տեղ ծնաւ:

Պ. Բեթղեհէմ քաղաքը, անբանից մսուրը:

Հ. Անունն ի՞նչ դրին:

Պ. Յիսուս, որ ետքը Քրիստոսալ կոչուեցաւ:

Հ. Յիսուս ըսելն ի՞նչ ըսել է:

Պ. Փրկիչ աշխարհի ըսել է:

Հ. Քրիստոս ըսելն ի՞նչ ըսել է:

Պ. Օծեալ Աստուծոյ ըսել է:

Հ. Յիսուս Քրիստոս ի՞նչ է:

Պ. Ղատարեալ Աստուած է, եւ կատարեալ մարդ է:

Հ. Ինչո՞ւ համար կատարեալ Աստուած է:

Պ. Ասոր համար՝ վասն զի կատարեալ աստուածային բնութիւն ունի:

Հ. Ինչո՞ւ համար կատարեալ մարդ է:

Պ. Ասոր համար՝ վասն զի կատարեալ մարդկային բնութիւն ունի:

Հ. Եթէ մի եւ նոյն ֆրիստոս՝ կատարեալ աստուածային բնութիւն ունի, եւ կատարեալ մարդկային բնութիւն ունի. ուրեմն երկո՞ւ բնութիւն ունի:

Պ. Այո՛, թէպէտ մի անձ է, բայց երկու բնութիւն ունի:

Հ. Որմէ՞ ծնաւ Տէր մեր Յիսուս ֆրիստոս:

Պ. Ի Մարիամայ սուրբ կոյս Աստուածածնէն:

Հ. Ինչո՞ւ համար Աստուածածնայ Ս՝-ըք կոյս կ'ըսես:

Պ. Ասոր համար կ'ըսեմ, որ սուրբ Աստուածածին կոյս մնաց զֆրիստոս յղացած ատենը, կոյս մնաց ծնած ատենը, եւ կոյս մնաց ծննդենէն ետքն ի յաւիտեան:

Հ. Ո՞չ է ֆրիստոսի հայրը մարդկութեան դիէն:

Պ. Վրիստոս մարդկութեան դիէն հայր չունի, ինչպէս Աստուածութեան դիէն ալ մայր չունի. այլ զօրութեամբ Հոգւոյն սրբոյ յղացաւ ի Մարիամայ սուրբ կոյս Աստուածածնէն:

Հ. Քրիստոս Տէրն մեր քանի՞ տարի ապրեցաւ աշխարհիս վրայ:

Պ. Լորեսունուերեք տարի եւ երեք ամիս:

Հ. Այնչափ ժամանակ ի՞նչ ըրաւ աշխարհիս վրայ:

Պ. Վարողեց, հրաշքներ գործեց, նոր օրէնքն հաստատեց, եւ արքայութեան ճամբան բանիւ եւ գործով մեզն սորվեցուց:

Հ. Ետքը ի՞նչ եղաւ:

Պ. Չարչարուեցաւ, խաչուեցաւ եւ մեռաւ մեր փրկութեան համար:

Հ. Ո՞ր ժամանակ չարչարուեցաւ եւ մեռաւ:

Պ. Պիղատոսի դատաւորին ժամանակը, եւ անոր հրամանաւ խաչուեցաւ:

Հ. Ո՞ր բնութեամբը խաչուեցաւ եւ մեռաւ:

Պ. Մարդկային բնութեամբը, եւ ոչ Աստուածութեամբը:

Հ. Ո՞ւր տեղ խաչուեցաւ եւ մեռաւ:

Պ. Գողգոթա լերան վրայ՝ Երուսաղէմ քաղքին քովը:

Հ. Մեռնելէն ետքը մարմինն ո՞ւր դրին:

Պ. Սուրբ գերեզմանը:

Հ. Քանի՞ օր մնաց գերեզմանը:

Պ. Լորեք օր:

Հ. Քրիստոսի հոգին մեռնելէն ետքը ո՞ւր գնաց:

Պ. Գնաց լիմպոս, (որ դժոխք ալ կ'ըսուի.) եւ անկէ ազատեց արդարոց հոգիքը:

Հ. Երեք օրէն ետքը ի՞նչ եղաւ:

Պ. Յարեաւ ի մեռելոց:

Հ. Ո՞ր օր յարեաւ:

Պ. Օճատկի սուրբ յարութեան օրը:

Հ. Ո՞վ յարոյց զՔրիստոս ի մեռելոց:

Պ. Խնք զինքը յարոյց իւր աստուածային զօրութեամբը:

Հ. Յարութենէ ետքը որչափ ժամանակ մնաց աշխարհիս վրայ:

Պ. Վառասուռն օր:

Հ. Այն քառասուն օրն ի՞նչ ըրաւ:

Պ. Իւր աշակերտացը սորվեցուց Քրիստոսնէական հաւատոյ խորհուրդներն եւ սուրբ Եկեղեցւոյ օրէնքները:

Հ. Քառասուն օրէն ետքը ո՞ր գնաց:

Պ. Համբարձաւ յերկինս, եւ նստու ընդ աջմէ Հօր:

Հ. Հիմայ Քրիստոս ո՞ր է:

Պ. Աստուածութեան դիէն ամէն տեղ է. իսկ մարդկութեան դիէն երկինքն է եւ ի սուրբ Հաղորդութեան:

Հ. Քրիստոսի համբարձմանէն ետքը ի՞նչ հանդիպեցաւ:

Պ. Աս եղաւ՝ որ տասն օրէն ետքը Հոգին սուրբ եկաւ առաքելոց վրայ, եւ առաքեալները

Հոգւով սրբով լեցուեցան, եւ գնացին քարոզեցին Քրիստոսի սուրբ հաւատքն ամէն աշխարհք:

Հ. Արդեօք Քրիստոս նորէն պիտի գայ, թէ չէ:

Պ. Այո՛, աշխարհի կատարածին պիտի գայ, ու դատաստան ընէ ամէն մարդու իրենց գործոցը համեմատ. արդարոց արքայութիւն պիտի տայ, եւ մեղաւորաց դժոխք:

Հ. Հիմակուան մեռնող արդարոց հոգիքն ո՞ր կ'երթան:

Պ. Թէ որ ամենեւին սուրբ են՝ շիտակ արքայութիւն կ'երթան. բայց թէ որ ներելի մեղք ունենան կամ թողուած մահուչափ մեղքերուն պատիժը վճարած չըլան, քաւարան կ'երթան:

Հ. Հապա մեղաւորներուն հոգիքն ո՞ր կ'երթան:

Պ. Ղժոխք կ'երթան:

Հ. Թէ որ հիմայ արդարոց հոգիքն արքայութիւն կ'երթան, եւ մեղաւորացը դժոխք, ուրեմն աւելորդ է որ Քրիստոս աշխարհիս կատարածին գայ դատաստան ընէ:

Պ. Աւելորդ չէ, վասն զի հիմայ արդարները միայն հոգւով կ'երթան արքայութիւն, եւ մեղաւորները միայն հոգւով կ'երթան դժոխք, բայց աշխարհիս կատարածին հոգւով եւ մար-

մնով պիտի երթան. կամ թէ ըսենք, այն ժամանակ բոլոր մարդը պիտի երթայ: Անոր համար պէտք է որ քրիստոս գայ դատաստան ընէ. եւ սուրբերն արքայութիւն, իսկ մեղաւորները դժոխք խրկէ. հիմայ զհոգին կը խրկէ, եւ այն ժամանակն զմարդը կը խրկէ:

Գ Լ Ո Ւ Խ Ս Դ .

Յաղագս Եփեղեցւոյ Քրիստոսի:

Հ. Հաւատամքին մէջ հաւատալու ուրիշ բան ալ կայ:

Պ. Այո՛, աս ալ կայ՝ որ պիտի հաւատանք ի մի միայն կաթողիկէ եւ առաքելական սուրբ Եկեղեցի:

Հ. Եկեղեցին ի՞նչ բան է կամ ո՞վ է:

Պ. Եւ ժողով ամէն քրիստոնեայ հաւատացելոց՝ մէկ տեսանելի գլխու կառավարութեան ներքեւ, որուն ամէնքը պիտի հնազանդին:

Հ. Ո՞վ է աշխարհիս վրայ այն գլուխը:

Պ. Եւ սրբազան Պապը կամ հայրապետը Հռովմէական սուրբ Եկեղեցւոյն:

Հ. Քանի՞ են եւ որո՞նք են քրիստոսի ճշմարիտ Եկեղեցւոյն նշանները:

Պ. Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցւոյն նշաններն այս չորսն են, Մի, կաթողիկէ, Առաքելական եւ Սուրբ:

Հ. Մեկնէ այս չորս նշանները:

Պ. 1. Ղշմարիտ Եկեղեցին Մէ կամ Մէ միայն է, վասն զի քրիստոս Տէրն մեր մինակ մէկ Եկեղեցի հաստատեց, որն որ իւր մէջը մէկ վարդապետութիւն, մի եւ նոյն խորհուրդներն եւ մի միայն գլուխ ունի:

2. Կաթողիկէ կամ Ընդհանրական կը կոչուի, վասն զի ամէն տեղ եւ ամէն ժամանակ տարածուած է:

3. Առաքելական կը կոչուի, վասն զի իւր սկիզբը քրիստոսի առաքեալներէն է, եւ իւր հովիւներն ու առաջնորդներն առաքելոց ճշմարիտ յաջորդներն են՝ եւ առաքելոց սորվեցուցած վարդապետութիւնը միշտ դաւանեցին ու քարոզեցին:

1-87 Greek

4. Սուրբ կը կոչուի, վասն զի սուրբ է իւր հիմնադիրն աստուածային Փրկիչն, իւր հաւատքն ու բարոյականութիւնը սուրբ է, եւ մարդկան ի սրբութիւն կ'առաջնորդէ:

Հ. Ի՞նչ ըսել է եւ այն ետքի խօսքը Հաւատամքին որ կ'ըսէ, Ի յարութիւն միեւնոյն էսիստոս յստիստիկոս:

Պ. Ըսել է թէ ամէն մեռած մարդիկ աշխարհիս կատարածին պիտի յարութիւն առնեն իրենց մարմնովը եւ կենդանանան: Եւ այն հաւատացեալներն՝ որ Աստուծոյ շնորհաց մէջ մեռած են՝ արքայութիւն պիտի երթան եւ յաւիտենական կեանքը ժառանգեն:



Գ Լ Ո Ւ Խ Ե .

Յաղագս վերջնոց մարտոյն :

Հ. Վերջինք մարդոյ քանի՞ են :

Պ. Չորս են, պոսինքն՝ Մահ, Դատաստան, Դժոխք եւ Արքայութիւն :

Հ. Քանի՞ դատաստան կայ :

Պ. Երկու, այսինքն՝ Առանձնական դատաստան եւ ընդհանրական դատաստան :

Հ. Ի՞նչ է առանձնական դատաստանը :

Պ. Ըն է, որ երբ մարդը կը մեռնի՝ հոգւովը կ'երթայ ֆրիստոսի առեանը, եթէ բոլորովին արդար է, արքայութիւն կը խրկէ զնա ֆրիստոս. եւ եթէ արդար է, բայց արատ մը ունի՝ քաւարան կը խրկէ. իսկ եթէ անզեղը մեղաւոր է՝ դժոխք կը խրկէ :

Հ. Ի՞նչ է ընդհանրական դատաստանը :

Պ. Ըն է, որ աշխարհիս կատարածին ֆրիստոս կու գայ դատաստան ընելու. եւ ամէն մարդու որ յարութիւն աուեր են, իրենց գործքին համեմատ՝ կամ արքայութիւն կու տայ եւ կամ դժոխք կը խրկէ :

Հ. Դժոխքն ի՞նչ է :

Պ. Օարհուրելի եւ անզնդային բանտ մըն է. եւ հոն կ'երթան հիմայ մեղաւորները հոգւով, եւ ընդհանրական դատաստանէն ետքը հոգւով եւ մարմնով. եւ հոն կը մնան յաւի-

տեանս յաւիտենից. եւ մէյ մ'ալ չեն կրնար անկէ ազատիլ :

Հ. Դժոխքն ի՞նչ կայ :

Պ. Սաստիկ մեծ կրակ կայ, եւ պէսպէս տանջանքներ :

Հ. Դժոխք ըսելով՝ միայն այդ յաւիտենական տանջանաց դժոխքը կ'իմանանք :

Պ. Ոչ, այլ չորս դժոխք կայ :

Հ. Ըսէ մէկիկ մէկիկ, որ տեսնեմ :

Պ. Ընացին դժոխքն էր լիմպոսը սուրբ նահապետաց եւ մարգարէից. եւ ֆրիստոս այն դժոխքն աւրեց :

Երկրորդ դժոխքն է յաւիտենական լիմպոսը չմկրտուած տղայոց. եւ հոն կրակ չկայ :

Երրորդ դժոխքն է յաւիտենական դժոխքը դատապարտեալ մեղաւորաց. եւ այն տեղն աւնոնք ու սատանաները կ'այրին եւ կը տանջուին յաւիտեանս յաւիտենից :

Չորրորդն է քաւարանը, որ տեղ մըն է կրակով լի, եւ այն տեղը կ'երթան այն արդարոց հոգիքը՝ որ ներելի եւ փոշէտեսակ մեղաց մէջ մեռած են, եւ կամ ապաշխարանքնին չեն լմնցուցեր. եւ հոն կը տանջուին, մինչեւ որ մեղքերնուն պատիժը լմնայ. եւ ետքը կ'ազատին եւ արքայութիւն կ'երթան :

Հ. Արդեօք մենք այս քաւարանի մէջ եղած
Տոգիներուն կրնանք օգնութիւն ընել՝ թէ չէ:

Պ. Այո կրնանք:

Հ. Ինչով կրնանք:

Պ. Պատարագով, աղօթքով, ողորմու-
թեամբ, եւ ուրիշ բարի գործքերով ալ կրնանք
անոնց օգնել, որ շուտ ազատին քաւարանին
տանջանքներէն:

Հ. Արքայութիւնն ի՞նչ է:

Պ. Աստուծոյ երեսաց տեսութիւնն է, որ
կը տեսնեն արդարները. եւ այն տեղն անպատ-
մելի պայծառութեամբ եւ փափկութեամբ կ'ու-
րախանան յաւիտեանս յաւիտենից:

Գ Լ Ո Ւ Խ Զ.

Յաղափս պարտաւորանոցն Աստուծոյ եւ Եկեղեցոյ:

Հ. Քանի՞ են Աստուծոյ պատուիրանները:

Պ. Տասն են:

Հ. Ըսէ որ տեսնեմ:

Պ. 1. Ես եմ Տէր Աստուած քո, մի ու-
նիցիս այլ աստուած առաջի իմ:

2. Մի առնուցուս զանուն Աստուծոյ քոյ
ընդ ունայն:

3. Յիշեա զօր շաբաթունսրբել զնա, այս-
ինքն զկիրակէս:

4. Պատուեա զՏայր քո եւ զմայր:

5. Մի սպանաներ:

6. Մի շնար:

7. Մի գողանար:

8. Մի սուտ վկայեր զընկերէ քումմէ:

9. Մի ցանկար կնոջ ընկերի քոյ,

10. Եւ մի ամենայնի որ նորա է:

Հ. Ո՞վ տուաւ այս պատուիրանները:

Պ. Աստուած տուաւ ի Տին օրէնս Մովսէս
մարգարէին ձեռքով. եւ Քրիստոս Տէրն մեր
Տաստատեց զանոնք ի նոր օրէնս:

Հ. Ո՞վ որ չի պահեր այս պատուիրանները,
այնպիսին ի՞նչ կ'ըլլայ:

Պ. Այնպիսի մարդը մահուանափ մեղօք կը
մեղանչէ, եւ դժոխք կ'երթայ:

Հ. Քանի՞ են սուրբ Եկեղեցւոյ պատուի-
րանները:

Պ. Զինգ են, եւ ասոնք են.

1. Յաւուրս կիրակէից եւ տօնից տեսանել
պատարագ:

2. Պահել զպահս եւ զծովապահս հրա-
մայեալ:

3. Ի տարւոջ գոնէ մի անգամ խոստո-
վանիլ:

4. Հաղորդիլ գոնէ ի տարւոջ մի անգամ,
այսինքն ի Զատիկ յարութեան Տեառն:

5. Տալ զտասանորդս ընչից:

Գ Լ Ո Ւ Խ Է .

Յաղագս Մեղաց :

Հ. Մեղքն ի՞նչ է :

Պ. Ամենայն խօսք կամ գործ կամ խորհուրդ, որ Աստուծոյ հրամանին դէմ է՝ մեղք է :

Հ. Քանի՞ տեսակ մեղք կայ :

Պ. Երկու, այսինքն՝ Սկզբնական եւ Ներգործական :

Հ. Սկզբնական մեղքն ի՞նչ է :

Պ. Այն մեղքն է՝ որ ամէն մարդու վրայ կը գտնուի ծնածին պէս. եւ ասիկայ մեր առաջին հօրը՝ Ադամայ անհնազանդութենէն կը քաշէ : Եւ այս մեղքս կը ջնջուի մարդուն վրայէն սուրբ մկրտութեամբ :

Հ. Ներգործական մեղքն ի՞նչ է :

Պ. Այն չարն է՝ որ մարդ խորհրդով, բանիւ եւ գործով՝ իւր կամօքը կը գործէ Աստուծոյ հրամանին դէմ : Եւ ասիկէ՝ միայն ճշմարիտ ապաշխարութեամբ եւ խոստովանութեամբ կըրնանք ազատիլ :

Հ. Ներգործական մեղքը քանի՞ տեսակ է :

Պ. Երկու, այսինքն՝ Ներերի եւ Մահուչափ :

Հ. Ներերի մեղքն ի՞նչ է :

Պ. Այն թեթեւ եւ փոքրիկ չարն է, որ մարդը կը գործէ օրինաց եւ կանոնաց դուրս, որ դժոխք չի տանիր զմարդ :

Հ. Մահուչափ մեղքն ի՞նչ է :

Պ. Այն ծանր եւ մեծ չարն է, որ կը զօրկէ զմարդն Աստուծոյ շնորհքէն եւ դժոխք կը տանի :

Հ. Քանի՞ են գլխաւոր մահուչափ մեղքերը :

Պ. Եօթն են, եւ ասոնք են .

1. Հպարտութիւն :

2. Նախանձ :

3. Բարկութիւն :

4. Ադահուցութիւն :

5. Ծուլութիւն :

6. Որկրամոլութիւն :

7. Բղջախոհութիւն :

Գ Լ Ո Ւ Խ Ը .

Յաղագս Հնորհքի :

Հ. Ի՞նչ է Հնորհք :

Պ. Հնորհքն է գերբնական պարգեւ մը՝ զոր Աստուած մեզի կու տայ վասն արդեանց Յիսուսի Գրիստոսի ի փրկութիւն մեր :

Հ. Քանի՞ տեսակ շնորհք կայ :

Պ. Երկու տեսակ շնորհք կայ. Սրբաբար կամ Ունակական շնորհք, եւ Ներգործական շնորհք :

Հ. Ի՞նչ է Սրբարար կամ Ունակական շնորհք:

Պ. Սրբարար կամ Ունակական շնորհքն է Աստուծոյ ի մեզ հեղեղ ներքին գերբնական ունակութիւն մը՝ որով իրեն հաճելի կ'ըլլանք:

Հ. Սրբարար շնորհք ի՞նչ կ'ըլլանք:

Պ. Սրբարար շնորհք ոչ միայն մեղքերն իս կը սրբուի, այլ նաեւ սուրբ, արդար եւ որդիք Աստուծոյ կ'ըլլանք:

Հ. Կրնայ սրբարար շնորհքն աճիլ եւ կորսուիլ:

Պ. Այո՛, կրնայ աճիլ եւ կորսուիլ:

Հ. Ի՞նչ բանով կ'աճի:

Պ. Բարի գործքեր կատարելով:

Հ. Ի՞նչ բանով կը կորսուի:

Պ. Մահուչափ մեղքք:

Հ. Ի՞նչ է Ներգործական շնորհք:

Պ. Ներգործական շնորհքն է՝ գերբնական եւ անցաւոր օգնութիւն մ'Աստուծոյ՝ որով կը զօրանանք բարին գործելու եւ չարէն խորշելու:

Հ. Ներգործական շնորհքն հարկաւոր է:

Պ. Այո՛, վասն զի առանց ներգործական շնորհաց ո՛չ բարին կրնանք կատարել եւ ո՛չ չարէն խորշիլ:

Հ. Աստուած ամէն մարդու հարկաւոր շնորհքը կու տայ:

Պ. Աստուած իւրաքանչիւր մարդու հարկաւոր շնորհքը կու տայ, վասն զի կ'ուզէ որ ամէն մարդ փրկուի եւ երջանիկ ըլլայ:

Հ. Ներգործական շնորհքն ի՞նչպէս կը կորսուի:

Պ. Ներգործական շնորհքը կը կորսուի՝ ներքին բարի ազդեցութեանց եւ լուսաւորութեանց չանսալով կամ անոնց դէմ դնելով:

Գ Լ Ո Ւ Խ Թ.

Յաղագս խորհրդոց Եկեղեցւոյ ընդհանրապէս:

Հ. Ի՞նչ է խորհուրդ սուրբ Եկեղեցւոյ:

Պ. Խորհուրդ սուրբ Եկեղեցւոյ՝ է ի Քրիստոսէ հաստատեալ զգալի նշան մը՝ որ մեր հոգւոյն շնորհք կուտայ եւ զմեզ կը սրբացընէ:

Հ. Ինչո՞ւ զգալի նշան կ'ըսուի:

Պ. Վասն զի արտաքին եւ տեսանելի միջոցներով անտեսանելի շնորհք կու տայ:

Հ. Քանի՞ են խորհուրդները:

Պ. Եօթն են.

1. Մկրտութիւն,
2. Դրոշմ,
3. Հաղորդութիւն,
4. Ապաշխարութիւն:

- 5. Վերջին օծումն,
- 6. Կարգ քահանայութեան,
- 7. Պսակ:

Հ. Խորհուրդ մը կատարելու համար քանի՞ բան պէտք է:

Պ. Երեք բան պէտք է. նիւթ, ջուր եւ Դիտաւորութիւն. եւ ասոնցմէ մինակ մէկն ալ պակաս ըլլայ՝ խորհուրդը կատարուած չ'ըլլար:

Հ. Ո՞րն է խորհրդոց նիւթը:

Պ. Խորհրդոց նիւթն է՝ խորհրդոց կատարման ատեն գործածուած բաները. ինչպէս՝ մկրտութեան նիւթն է ջուրը:

Հ. Ո՞րն է խորհրդոց ձեւը:

Պ. Խորհրդոց ձեւն է՝ խորհուրդ մը կատարելու համար զըուցուած խօսքերը. որ կ'ըսուի ջուր բանի:

Հ. Ո՞րն է խորհրդոյ պաշտօնեայն:

Պ. Խորհրդոյ մը պաշտօնեայն կամ սպասաւորն է՝ խորհուրդը կատարող անձը:

Հ. Որո՞նք են Մեռելոց խորհուրդ ըսուածները:

Պ. Մեռելոց խորհուրդներն են՝ Մկրտութիւն եւ Ապաշխարութիւն:

Հ. Ինչո՞ւ համար մեռելոց խորհուրդ կ'ըսուին:

Պ. Անոր համար մեռելոց խորհուրդ կ'ըսուին, վասն զի սրբարար կամ առաջին շնորհքը կու տան, եւ մեղքով մեռած հոգին կը կենդանացնեն:

Հ. Որո՞նք են կենդանեաց խորհուրդները:

Պ. Կենդանեաց խորհուրդներն են՝ Դրոշմ, Հաղորդութիւն, Վերջին օծումն, Կարգ քահանայութեան եւ Պսակ:

Հ. Ինչո՞ւ համար կենդանեաց խորհուրդ կ'ըսուին:

Պ. Անոր համար կենդանեաց խորհուրդ կ'ըսուին, վասն զի մեղքով չմեռած՝ այլ կենդանի հոգւոյն կը տրուին, եւ անոր ունեցած սրբարար շնորհքը կ'աճեցնեն:

Հ. Որո՞նք են անջնջելի կնիք տպաւորող խորհուրդները:

Պ. Անջնջելի կնիք տպաւորող խորհուրդներն են՝ Մկրտութիւն, Դրոշմ եւ Կարգ քահանայութեան:

Հ. Ի՞նչ է այս անջնջելի կնիքը:

Պ. Այս անջնջելի կնիքը հոգեւոր նշան մըն է՝ որ հոգւոյն վրայ կը տպաւորուի. եւ անոր համար ալ միայն մէկ անգամ կը տրուին այս երեք խորհուրդները:

ԳԼՈՒԽ Ժ.

Յապագայ խորհրդոյ սորբե Եկեղեցոյ է մանուկոց:

Հ. Մկրտութիւն ի՞նչ է:

Պ. Եկեղեցւոյ խորհուրդ մըն է, որ կը ջնջէ սկզբնական մեղքը, եւ զմեզ ֆրիստոնեայ եւ որդեգրական որդի Աստուծոյ կ'ընէ:

Հ. Ո՞վ է մկրտութեան սպասաւորը:

Պ. Վրահանան է, բայց հարկաւոր ժամանակ ուրիշ մարդ ալ որ քահանայ չէ՝ կրնայ մկրտել:

Հ. Ինչո՞վ կ'ըլլայ մկրտութիւնը:

Պ. Աս երկու բանովս, այսինքն՝ երեկային վրայ ջուր լեցընելով, եւ ըսելով այսպէս. (Այս անուն) մկրտի է յեռն է՛, յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն սբոյ. կամ ըստ Լատինացւոց. ես մկրտեմ զեղ յանուն Հօր, եւ այլն:

Հ. Գրոշմն ի՞նչ է:

Պ. Եկեղեցւոյ խորհուրդ մըն է, որ կը հաստատէ զմարդն ի հաւատս Յիսուսի-Քրիստոսի:

Հ. Ո՞վ է գրոշմին սպասաւորը:

Պ. Եպիսկոպոսն է, եւ հրամանաւ սուրբ Եկեղեցւոյն նաեւ քահանան:

Հ. Ինչո՞վ կ'ըլլայ գրոշմը:

Պ. Վրսեղով գրոշմելոյն ճակատն զսուրբ մեռոնը, եւ ըսելով զձեւ բանին:

Հ. Ապաշխարութիւնն ի՞նչ է:

Պ. Եկեղեցւոյ խորհուրդ մըն է, որ կը ջնջէ մարդուն մեղքերը՝ որ մկրտութենէն ետքը գործեր է:

Հ. Ո՞վ է սպասաւորն ապաշխարութեան խորհրդոյն:

Պ. Հրաման ունեցող քահանան է:

Հ. Քանի՞ բան պէտք է լաւ խոստովանութիւն ընելու:

Պ. Հինգ բան. այսինքն՝ Քննութիւն, Չքղջումն, Առաջագրութիւն, Խոստովանութիւն, եւ Ապաշխարանաց վճարումն:

Հ. Մեկնէ զասոնք մէկիկ մէկիկ:

Պ. 1. Յառաջ պէտք է որ մարդ քննէ իր խղճմտանքը, ու միտքը բերէ գործած մեղքերը:

2. Չքղջայ, այսինքն ցաւի անոնց վրայ. եւ Աստուծմէ թողութիւն խնդրէ:

3. Առաջագրէ (նիյէ՛ դնէ) որ մէկ անգամ մըն ալ այն մեղքերը չընէ:

4. Երթայ խոստովանի քահանային մէկիկ մէկիկ իր ամէն մեղքերը:

5. Խոստովանահօր դրած ապաշխարանքը կատարէ:

Հ. Հաղորդութիւն կամ Սրբութիւն ի՞նչ է:

Պ. Եւ մարմին, արիւն, հոգին եւ Աստուծութիւն ֆրիստոսի, հացին ու գինւոյն տեսակաց ներքեւը:

Հ. Հացն ու գինին Լորբ կ'ըլլան մարմին եւ արիւն ֆրիստոսի:

Պ. Այն ժամանակն որ քահանան պատարագին մէջը կ'ըսէ Հացին վրայ՝ Աւեւ կերեւ, այս է մարմին ի՞նչ. եւ գինւոյն վրայ՝ Արբեւ է սահէ սօքնեւեան, այս է արիւն ի՞նչ:

Հ. Աւեւ կերեւէն եւ Արբեւ է սահէէն ետքը կը մնայ ի Հացն եւ ի գինին իրենց բնութիւնը:

Պ. Ոչ. այլ միայն դրսի պատահմունքները կը մնան, այսինքն համը, հոտը եւ ձեւը. եւ անոնց ներքեւը կայ ֆրիստոսի ճշմարիտ մարմինն ու արիւնը:

Հ. Հաղորդութիւն կամ Սրբութիւն առնելու քանի՞ բան պէտք է:

Պ. Երկու բան. այսինքն մաքրութիւն հոգւոյ եւ մաքրութիւն մարմնոյ:

Հ. Մաքրութիւն հոգւոյ ի՞նչ է:

Պ. Աս է որ մարդ խոստովանած ըլլայ իր մեղքերը, եւ ետքը սուրբ սրտիւ առնու սուրբ Հաղորդութիւնը:

Հ. Մաքրութիւն մարմնոյ ի՞նչ է:

Պ. Աս է որ սրբութիւն առնելու օրը կէս գիշերէն սկսեալ՝ ծով կեցած ըլլայ եւ մաքուր կենայ:

Հ. Արդեօք պէտք է որ մարդ Հաղորդուած առնելը ֆրիստոսի թէ՛ մարմինը թէ՛ արիւնն առնու:

Պ. Հարկաւոր չէ. միայն մարմինն ալ առնելով՝ ճշմարտապէս առած կ'ըլլայ ֆրիստոսի մարմինն ու արիւնը:

Հ. Ինչո՞ւ համար միայն մարմինն առնելով՝ արիւնն ալ առած կ'ըլլայ:

Պ. Ասոր համար՝ վասն զի կ'առնու ֆրիստոսի կենդանի մարմինը, որուն հետ է սուրբ արիւնն ալ:

Հ. Հաղորդութիւն առնելէն ետքը ի՞նչ պէտք է ընել:

Պ. Պէտք է, որ մարդ գոնէ քառօրդի մը չափ առանձին աղօթք ընէ եւ շնորհակալ ըլլայ ֆրիստոսի, եւ խնդրէ անկէ՝ իւր հոգւոյն եւ մարմնոյն պէտք եղած բաները:

Հ. Վերջին օծումն ի՞նչ է:

Պ. Եկեղեցւոյ խորհուրդ մըն է, որ մարդուն ներելի մեղքերն ու մեղաց մնացորդները կը ջնջէ, եւ զօրութիւն կու տայ հոգւոյն՝ որ քաջապէս գէժ կենայ սատանային փորձութեանցը:

Հ. Որո՞ւն պէտք է տալ վերջին օծումը:

Պ. Միայն ծանր եւ վտանգաւոր հիւանդաց:

Հ. Ի՞նչ է վերջին օժման նիւթը:

Պ. Ձէթն է՝ եպիսկոպոսէն օրհնած:

Հ. Կարդ քահանայութեան ի՞նչ է:

Պ. Ազեղեցւոյ խորհուրդ մըն է, որ եպիսկոպոսին ձեռնադրութեամբը՝ դպիր, սարկաւադ եւ քահանայ կ'ըլլան ոմանք ի սպասաւորութիւն սուրբ Եկեղեցւոյն:

Հ. Պսակն ի՞նչ է:

Պ. Ազեղեցւոյ խորհուրդ մըն է, որ օրինաւորապէս պսակելոց շնորհք կու տայ, եւ անլուծանելի կապանօք կը կապէ զանոնք մինչեւ ի մահ:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յարգէ՛ս աղօթից:

Հ. Ի՞նչ է Աղօթք:

Պ. Աղօթքն է՝ մտքով կամ բերնով Աստուծոյ հետ խօսիլ, անկէ բան մը խնդրելու կամ անոր շնորհակալ ըլլալու կամ զանիկայ փառաբանելու համար:

Հ. Ի՞նչ բան կրնանք խնդրել աղօթքով:

Պ. Մեր հոգւոյն եւ մարմնոյն պէտք եղած բաները, եւ մանաւանդ շնորհք եւ մեղաց թողութիւն:

Հ. Ի՞նչպէս պէտք է աղօթել:

Պ. Պէտք է աղօթել մտադրութեամբ, յարգութեամբ եւ ջերմեռանդութեամբ:

Հ. Կրնա՞նք Աստուծակ զատ նաեւ սուրբ բերուն աղօթել:

Պ. Այո՛ կրնանք՝ խնդրելով անոնցմէ որ մեզի համար բարեխօս ըլլան առ Աստուած:

Հ. Աղօթքներուն մէջ ո՞րն է գլխաւոր աղօթք:

Պ. Հայր Թեր երկնին է, որ Տէրուհիս աղօթի ալ կ'ըսուի. զոր Գրիստոս Տէրն մեր շարագրեց եւ սորվեցուց:

Հ. Ըսէ որ տեսնեմ:

Պ. Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի: Չհաց մեր հանապազորդ սուր մեզ այսօր. եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ: Չի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս, ամէն:

Հ. Հայր մեր երկինքէն ետքը՝ ո՞ր աղօթքն է առաւել գլխաւոր եւ ընդունելի:

Պ. Ողջոյ՛ն իեղ Մարիամ աղօթքն է, որով Աստուծակ ետքը կ'աղօթենք առ ամենասուրբ մայր նորա առ Տիրամայր սուրբ Աստուածածին:

Հ. Ըսէ Ողջոյն որ տեսնեմ:

Պ. Ողջոյն քեզ Մարիամ, լի շնորհօք. Տէր ընդ քեզ. օրհնեալ ես դու ի կանայս. եւ

օրհնեալ է պտուղ որովայնի քոյ Յիսուս: Սըր-
բուհի Մարիամ, մայր Աստուծոյ, աղօթեա վասն
մեր մեղաւորացս, այժմ եւ ի ժամու մահուան
մերոյ, ամէն:

Հ. Ո՞վ շարադրեց Ողջոյն քեզ Մարիամը:

Պ. Կէս մը Գարրիէլ Տրեշտակն ըսաւ,
կէս մը սրբուհին Եղիսաբէթ, եւ կէս մը սուրբ
Եկեղեցին:

Հ. Անոնցմէ ի զատ ուրիշ աղօթքներ ալ
կան ընդունելի Աստուծոյ, եւ մօր նորա սուրբ
Աստուածածնայ:

Պ. Այո՛ կան, այսինքն՝ Ժամադրքին ա-
ղօթքները, Հաւատով խոստովանիմ, Նարեկայ
աղօթքները, Աստուածածնայ սուրբ Վարդա-
րանն եւ Լիթանիան, Հրեշտակ Տեառն, Ողջ
լեր Թագուհի, եւ ասոնց նման ուրիշ լաւ
աղօթքներ:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ .

Յաղագս Աստուծոյ:

Հ. Բրիստոնէական կամ գերբնական առա-
քինութիւն ինչ է:

Պ. Վրիստոնէական կամ գերբնական ա-
ռաքինութիւնը միտում մըն է բարին գործելու
եւ չարէն խորշելու:

Հ. Ինչո՞ւ համար գերբնական առաքինու-
թիւն կ'ըսուի:

Պ. Անոր համար՝ վասն զի մարդուս բնա-
կանէն վեր է, եւ Աստուծոյ պարգեւ է:

Հ. Քանի՞ տեսակ գերբնական առաքինու-
թիւն կայ:

Պ. Երկու տեսակ. Աստուածաբանական
առաքինութիւն եւ Բարոյական առաքինութիւն:

Հ. Որո՞նք են աստուածաբանական առա-
քինութիւնները:

Պ. Այս երեքն են. Հաւատք, Յոյս եւ Սէր:

Հ. Ինչո՞ւ համար աստուածաբանական ա-
ռաքինութիւն կ'ըսուին:

Պ. Անոր համար՝ վասն զի անոնցմով Աս-
տուծոյ կը հաւատանք, յԱստուած կը յուսանք
եւ զԱստուած կը սիրենք:

Հ. Պէտք է որ այս երեք առաքինութիւն-
ներն ունենանք:

Պ. Այո՛, վասն զի առանց ասոնց ո՛չ Աս-
տուծոյ կրնանք հաճոյ ըլլալ, ո՛չ ալ փրկուիլ:

Հ. Ի՞նչ է Հաւատք:

Պ. Հաւատքը գերբնական առաքինութիւն
մըն է, որով Աստուծմէ յայտնուած եւ սուրբ
Եկեղեցիէն մեր առջեւ դրուած ճշմարտութեանց
աներկբայ կը հաւատանք:

Հ. Ի՞նչ է Յոյս:

Պ. Յոյսը գերբնական առաքինութիւն մըն է, որով հաստատապէս կը յուսանք թէ Աստուած կը հասցընէ զմեզ իւր խոստացած յաւիտենական երջանկութեան, եւ կու տայ մեզի անոր հասնելու պէտք եղած միջոցները:

Հ. Ի՞նչ է Սէր:

Պ. Սէրը գերբնական առաքինութիւն մըն է, որով զԱստուած իբրեւ մի միակ բարութիւն՝ իրեն համար, զմեզ եւ մեր ընկերն Աստուծոյ համար կը սիրենք:

Հ. Ի՞նչպէս պէտք ենք սիրել զԱստուած:

Պ. Ամէն բանէ վեր:

Հ. Ինչո՞ւ ամէն բանէ վեր պէտք ենք սիրել զԱստուած:

Պ. Այն զի Աստուած ամենաբարի, ամենակատարեալ եւ ամենաբարերար էակ է, անոր համար ամէն բանէ աւելի սիրուելու արժանի է:

Հ. Այս երեք առաքինութեանց դէմ մարդ ի՞նչպէս կրնայ մեղանչել:

Պ. Ասոնց հակառակ գործեր ընելով:

Հ. Աստուծմէ զատ զո՞վ պարտական ենք սիրել:

Պ. Աստուծմէ զատ պարտական ենք սիրել մեր ընկերը, եւ այս կ'ըսուի ընկերսիրութիւն կամ Եղբայրսիրութիւն:

Հ. Ի՞նչ է Ընկերսիրութիւն կամ Եղբայրսիրութիւն:

Պ. Ընկերսիրութիւնն է սիրել զընկերն իբրեւ զանձն վասն Աստուծոյ. այսինքն ընկերն իւր անձին պէս սիրել՝ Աստուծոյ համար:

Հ. Ի՞նչպէս կրնանք ընկերնիս մեր անձին պէս սիրել:

Պ. Մեր կրցածին չափ անոր օգնելով եւ միշտ անոր բարեքը բաղձալով:

Հ. Որո՞նք են մեր ընկերները:

Պ. Ամենայն մարդիկ, նաեւ մեր թշնամիները:

Հ. Ի՞նչ են Հաւատոյ, Յուսոյ, Սիրոյ ՚սերգործութիւնները:

Պ. Այս ներգործութիւնները համառօտ աղօթքներ են, որոնցմով Աստուծոյ կը յայտնենք մեր հաստատ հաւատքը, յոյսն ու սէրը:

Հ. Ո՞րն է ՚սերգործութիւն հաւատոյ:

Պ. Աստուած իմ, կը հաւատամ հաստատապէս ամէն ճշմարտութեանց որ դուն յայտնած ես սուրբ Եկեղեցւոյ. վասն զի դու ինքն անսխալ ճշմարտութիւն ես: Կը խնդրեմ քու շնորհքդ որ այս սուրբ հաւատքիս մէջ ապրիմ մինչեւ ի մահ:

Հ. Ո՞րն է ՚սերգործութիւն յուսոյ:

Պ. Աստուած իմ, հաստատ յուսով կը յուսամ ի քեզ, վասն զի ամենաբարի ես: Կը

յուսամ քու անբաւ բարութենէդ՝ որ ինծի այս աշխարհիս մէջ շնորհք եւ թողութիւն կու տաս, եւ ապա յաւիտենական փրկութեան կը հասցընես: Կը խնդրեմ քու շնորհքդ որ այս անշարժ յուսով ապրիմ մինչեւ ի մահ:

Հ. Ո՞րն է Ներգործութիւն սիրոյ:

Պ. Աստուած իմ, կը սիրեմ զքեզ բոլոր սրտանց եւ ամէն բանէ վեր, վասն զի դու միայն ամենայն սիրոյ արժանի ես, եւ զիս անհուն սիրով կը սիրես: Քու սիրոյդ համար կը սիրեմ նաեւ ընկերս՝ իմ անձինս պէս: Կը խնդրեմ քու շնորհքդ որ այս սուրբ սիրոյդ մէջ ապրիմ մինչեւ ի մահ:

Հ. Որո՞նք են գլխաւոր բարոյական առաքինութիւնները:

Պ. Գլխաւոր բարոյական առաքինութիւններն են՝ Խոհեմութիւն, Արդարութիւն, Արիութիւն եւ Ժուժկալութիւն:

Հ. Ինչո՞ւ համար ասոնք գլխաւոր բարոյական առաքինութիւնք կ'ըսուին:

Պ. Այն զի բոլոր միւս բարոյական առաքինութեանց հիմն ու աղբիւրն են:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ .

Յաղագս Գործոց ողորմութեան:

Հ. Քանի՞ են Գործք ողորմութեան:

Պ. Երկու են, այսինքն՝ հոգեւոր եւ մարմնաւոր:

Հ. Հոգեւոր գործք ողորմութեան քանի՞ են:

Պ. Եօթն են, եւ ասոնք են.

1. Ուսուցանել զտգէտս.
2. Տալ բարի խորհուրդ տարակուսելոյն.
3. Մխիթարել զվշտացեալս.
4. Խրատել զմեղացեալս.
5. Ներել ընկերին զընկալեալ վնասն.
6. Համբերել պակասութեանց ընկերին.
7. Աղօթել վասն կենդանեաց եւ մեռելոց:

Հ. Մարմնաւոր գործք ողորմութեան քանի՞ են:

Պ. Եօթն են, եւ ասոնք են.

1. Կերակրել զքաղցեալս.
2. Արբուցանել զծարաւեալս.
3. Չգեցուցանել զմերկս.
4. Ընդունել ի տուն զօտարս եւ զպանդուխտս.
5. Տեսնել զհիւանդս.
6. Այց առնել բանտարկելոց.
7. Թաղել զմեռեալս:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Գ .

Յաղագս Ներողութեան:

Հ. Ի՞նչ է Ներողութիւն:

Պ. Ներողութիւնն է թողութիւն կամ ներումն այն ժամանակաւոր պատժոց մեղաց՝ զորոնք խոստովանանքի արձակմանէ ետքը կամ այս աշ-

խարհիս վրայ կամ քաւարանի մէջ պիտի կրէինք :

Լ. Ներողութիւնը քանի՞ տեսակ է :

Պ. Ներողութիւնը երկու տեսակ է. Լիակատար եւ Մասնական :

Լ. Ի՞նչ է Լիակատար ներողութիւն :

Պ. Լիակատար ներողութիւնն է ներումն ամենայն ժամանակաւոր պատժոց :

Լ. Ի՞նչ է Մասնական ներողութիւն :

Պ. Մասնական ներողութիւնն է ժամանակաւոր պատժոց միայն մէկ մասին թողուիլը :

Լ. Ներողութիւն վաստըկելու համար ի՞նչ բան կը պահանջուի :

Պ. Ներողութիւն վաստըկելու համար կը պահանջուի նախ՝ Շնորհաց վիճակ, այսինքն մեղքէ ազատ ըլլալ՝ խոստովանութեամբ կամ զղջմամբ. եւ երկրորդ՝ ներողութիւնը վաստըկելու համար դրուած աղօթքը կամ բարի գործը կատարել :

Լ. Ներողութիւնն որո՞ն համար կրնանք վաստըկիլ :

Պ. Ներողութիւն կրնանք վաստըկիլ մեզի եւ քաւարանի հոգւոց համար :



Յ Ա Ն Ե Լ Ո Ւ Ա Տ

Խրատ Ապաշխարութեան խորհրդոյն վրայ :

Ինչպէս որ ֆրիստոնէական վարդապետութիւնը սորվել եւ լաւ գիտնալ հարկաւոր է ամէն քրիստոնէի, նոյնպէս ալ ապաշխարութեան խորհուրդը լաւ հասկընալ եւ լաւ կատարել հարկաւոր է. որովհետեւ մկրտութենէ ետքը փրկութեան ճանապարհն ապաշխարութիւնն է : Ասոր համար ֆրիստոնէական վարդապետութենէն ետքը դրինք այս տեղս մասնաւոր խրատ ապաշխարութեան խորհրդոյն վրայ, որ ամէն մարդ լաւ կատարելու կերպը գիտնայ :

Ապաշխարութիւնը, ինչպէս վերը ըսինք, (երես 29.) Եփեցոյն խորհուրդ չէն է որ կը ԲՄ Ժողովուրդու ժողովոյն որ Վերստիսէն ետքը գործել է. եւ կը կատարուի խոստովանութեամբ. ինչպէս որ դրոշմն՝ օժմամբ, եւ մկրտութիւնը՝ լուացմամբ :

Խոստովանութիւնն ուրիշ բան չէ, բայց եթէ ան՝ որ մարդ իւր ըրած մեղքերն ինք յայտնէ եւ մէկիկ մէկիկ իր բերնով խոստովանի պատմէ խոստովանահօր առջեւը, եւ մեղայ գոչէ, ու արձակում առնու : Եւ աս հինգ բանով կ'ըլլայ,

ինչպէս յառաջ ըսինք. որ են՝ քննութիւն, Զըջումն, Առաջադրութիւն, Խոստովանութիւն եւ Ապաշխարանաց վճարումն:

Քննութիւնն ան է, որ յառաջ հանդարտ սրտով քու խղճմտանքդ պիտի քննես, եւ ամէն մեղքերդ զատ զատ միտք առնուս: Եւ ասոր համար ընդարձակ կերպով ճամբայցուցուցինք վարը՝ որ առանց դժուարութեան կարենաս կատարել:

Քննութենէն ետքը պէտք է որ կատարեալ զըջում ընես, այս ինքն՝ քու մեղքերուդ վըայ մեծ ցաւ ունենաս՝ թէ ինչո՞ւ համար ըրի: Այս ցաւը սրտիդ մէջ ամէն ցաւերէն սաստիկ պիտ'որ ըլլայ՝ թէ ինչո՞ւ համար իմ ամենաբարի Աստուածս բարկացուցի, եւ հաստատ առաջադրութիւն ալ պիտի ընես, որ մէյ մ'ալ անանկ դործքեր չգործես Աստուծոյ կամաց դէմ: Նաեւ պատրաստական կամք ունենաս խոստովանա՜հօր տուած ապաշխարանքն ընդունելու եւ յօժարութեամբ կատարելու:

Այս զըջումն ու առաջադրութիւնը դիւրացնելու համար աղօթք մը դրինք (տես երես 58), որուն մէջ նաեւ կը խոստանաս Աստուծոյ ապաշխարանքդ կատարել:

Անկէ ետքը խոստովանութեան աղօթքն ալ պէտք է որ ընես, (երես 59.) եւ երթաս խոստովանիս մեղքերդ մէկիկ մէկիկ ամէն պարագաներով՝ իրաւասութեան իշխանութիւն եւ հրաման ունեցող քահանային առջեւը:

Մեղքերդ զըուցելու ատեն՝ ինք զինքդ պիտի ամբաստանես, զուրիշը պատճառ չըռնես:

Ամբնայլէն կամ ուրիշ բանի մը համար քու կամքովդ խոստովանանքին մէջ մահու չափ մեղք մը պիտի չպահես:

Խոստովանանքի մէջ կամաւ սուտ պիտի չզըուցես:

Մեղքերդ պատմէն լմընցընելէն ետքը՝ խոստովանա՜հօր տուած խրատներուն լաւ ուշ պիտի դնես, ու դրած ապաշխարանքը միտք առնուս, որպէս զի ետքը կարենաս կատարել, ապա թէ չէ՝ խոստովանանքը կիսկատար կ'ըլլայ:

Ամէնէն վերջը մեղայ պիտի գոչես ամէն մեղացդ վըայ, թէ՛ ըսածներուդ, թէ՛ մոռցածներուդ, պզտիկուց ի վեր ինչ որ ըրեր ես: Եւ արձակում առնուս ելլես, խոստովանութենէ ետքն ըտուելու աղօթքները զըուցես, (երես 60.) եւ ապաշխարանքդ ճիշդ կատարես:

Այսպէս ամէն բան զգուշութեամբ ընելով՝ ապաշխարութեան խորհուրդը լաւ կրնաս կատարել:

Ք Ն Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Խ Ղ Ճ Ի Մ Տ Ա Յ

ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՍՏՈՒԻՐԱՆՆԵՐՈՒՄ ՎՐԱՅ

Առաջին պատուիրան:

Ես եմ Տէր Աստուած քո. մի ունեցիս այլ աստուած
տաաջի իմ:

Ասոր դէմ մեղանչեր ես՝

Եթէ հաւատքի հարկաւոր բաները սոր-
վելու փոյթ չունեցար, կամ սորվելէն ետքը
ծուլութեամբդ մոռցար:

Եթէ կարծիք ունեցար թէ ամէն մարդ
իւր հաւատքովը փրկութեան կրնայ հասնիլ:

Եթէ հաւատքի մասանց վրայ երկմտեցար:

Եթէ սուրբ բաներու պատիւ չտուիր:

Եթէ Աստուծոյ անունն ու սուրբ Գրոց
բաները պարագայ տեղ յիշեցիր:

Եթէ Աստուծմէ աւելի կամ Աստուծոյ
հաւասար՝ աշխարհքիս մէջ բան մը սիրեցիր:

Եթէ մարդկային նկատման կամ վախու-
համար ուղղափառութիւնն ուրացար:

Եթէ երազներու կամ երազ մեկնողներու
հաւատացիր:

Եթէ հերետիկոսներու գրքեր պահեցիր
քովդ կամ կարդացիր:

Եթէ Աստուծոյ ողորմութենէն յուսահա-
տեցար, կամ ողորմութեանը վրայ յանդգնելով՝
չար բաները շարունակեցիր՝ վարքդ չշտկեցիր:

Եթէ մեղքերուդ վրայ չուզեցիր զղջալ,
մահուան ատենին թող տալով:

Եթէ այս կեանքը հանգերձեալ փրկու-
թենէն աւելի սիրեցիր:

Եթէ հոգեւոր բաներէն զգուցցար կամ
ձանձրացար:

Եթէ ստէպ եւ շատ անգամ հաւատոյ,
յուսոյ եւ սիրոյ ներգործութիւններն ընելու ան-
փոյթ եղար:

Եթէ աղօթքի մէջ, ժամասացութեան,
պատարագի առջեւ միտքդ ամփոփելու անփոյթ
եղար:

Եթէ սուրբ խորհուրդներու լաւ պատրաս-
տութիւն տեսնելու փոյթ չունեցար:

Եթէ Եկեղեցւոյ պաշտօնեաներն արհա-
մարհեցիր, կամ ջերմեռանդներն եւ անոնց բա-
րեպաշտութիւնը ծաղը ըրիր:

Եթէ սուրբ կարգ ունեցողի զարկիր, կամ
ինչ կերպով որ ըլլայ՝ կարգին պատիւն անար-
գեցիր:

Երկրորդ պատուիրան:

Մն անուցուս զամուն Աստուծոյ քոյ ընդ ունայն:

Ասոր դէմ մեղանչեր ես՝

Եթէ Աստուծոյ կամ սրբոց անունը հայ-
հոյեցիր, եւ եթէ զԱստուած բարկացընելու եւ
նախատելու համար ըբրան առիր:

Եթէ պէտք չեղած տեղ երգում ըրիր:

Եթէ գիտութեամբ կամ կարծիքով սուտ երգում ըրիր. կամ ուրիշն սուտ երգուըննալու պատճառ եղար:

Եթէ երգումով բան մը խոստացար ու չպահեցիր. կամ եթէ չար բան ընելու կամ բարի բան մը չընելու երգում ըրիր. կամ ուրիշն պատճառ եղար՝ ասանկ երգում ընելու:

Եթէ առանց մտածելու պէսպէս ուխտեր ըրիր. կամ ինչ ուխտեցիր նէ՛ չկատարեցիր կամ չուզեցիր կատարել:

Եթէ զինքդ կամ զուրիշն անիծեցիր:

Եթէ քու վրագ կամ ուրիշն վրայ Աստուծոյ անէծքը կամ պատիժը խնդրեցիր:

Երրորդ պատուիրամ:

Յիշեա զօր շաբաթուն սրբել զնա. այսինքն գիւրդակէս:

Ասոր դէմ մեղանչեր ես՝

Եթէ տօն օրերը չպահեցիր՝ գործելով, կամ ուրիշն գործել տալով Եկեղեցւոյ արդեւած գործքերը:

Եթէ կիրակի ու տօն օրերը մեղանչական գործքեր ըրիր, կամ մեղաց տեղերը գացիր զբօսանք ընելու:

Եթէ ամենեւին հոգեւոր բաներու ետեւէ չեղար:

Եթէ մահուչափ մեղքի մը մէջ գիտնալով վբեղ՝ Եկեղեցւոյ խորհուրդ մ'առիր:

Եթէ եկեղեցւոյ մէջ գէշ մեղք կամ անվայել բան մ'ըրիր:

Չորրորդ պատուիրամ:

Պատուեա գայր քո եւ զմայր:

Ասոր դէմ մեղանչեր ես՝

Եթէ հօրդ ու մօրդ պէտք եղած պատիւն ու յարգութիւնը չտուիր:

Եթէ գործքով կամ խօսքով հայրդ մայրդ արհամարհեցիր կամ բարկացուցիր:

Եթէ հօրդ ու մօրդ խօսքէն դուրս ելար, կամ անոնց անհնազանդ եղար:

Եթէ հայրդ մայրդ բամբասեցիր, եւ անոնց դէմ բաներ զուցեցիր:

Եթէ անոնց մահուան ցանկացար, կամ անոնց փնասելու ետեւէ եղար:

Եթէ զանոնք ծաղը ըրիր, կամ անոնց պակասութիւնը դուրս հանեցիր ու խայտառակեցիր:

Եթէ իրենց հրամանէն դուրս բան մ'ըրիր, կամ առանց իրենց հարցընելու տնէն բան վերուցիր կամ գողցար:

Եթէ հոգեւոր հօրդ կամ վարդապետիդ անհնազանդ եղար, կամ զանոնք արհամարհեցիր կամ սրդողցուցիր:

Եթէ պատճառ եղար ուրիշն ալ այսպիսի մեղքեր գործելու, չար օրինակ կամ խրատ տալով:

Հինգերորդ պատուիրան:

Մն սպանաներ:

Ասոր դէմ մեղանչեր ես՝

Եթէ մէկը զարկիր կամ վերաւորեցիր, կամ մէկը սպաննեցիր, եւ կամ ուրիշին յանձնեցիր ասանկ բան մը ընել, կամ ընողին հաւնեցար:

Եթէ վրէժխնդրութիւն ընելու համար մէկն ատեցիր, եւ շատ ժամանակ կեցար անանկ:

Եթէ ատելութեամբ կամ ծուռ նայելով սիրտ վերաւորեցիր, կամ ուրիշի դէմ ոխ ունենալով՝ քու սրտիդ մէջ զինքն սպաննեցիր:

Եթէ չուզեցիր հաշտուիլ, կամ քեզի եղած վնասին ներել, կամ քու ըրած վնասիդ համար թողութիւն չուզեցիր:

Եթէ բարկութեամբ զքեզ կամ զուրիշն անիծեցիր, թէ կենդանի ըլլայ եւ թէ մեռած, կամ բարկութեան ատեն նախատական խօսքերով զուրիշը սրդողցուցիր ու մեղաց պատճառ եղար:

Եթէ ուրիշներուն մէջ խռովութիւն ու թշնամութիւն սերմանեցիր: Աս մեղքս շատ կրնայ մեծնալ, անոր համար պէտք է մէկիկ մէկիկ պատմել ինչ չարիք որ ասկէ հետեւեցաւ, որպէս զի թողութիւն գտնես:

Եթէ մեղանչական բաներու համար զուրիշը գովեցիր:

Եթէ չար օրինակ ու չար խրատ տուիր՝ գէշ բաները գովելով ու լաւերը վար զարնելով:

Եթէ զուրիշը չափէն աւելի կերցուցիր խմցուցիր եւ գինովցուցիր՝ քու զբօսանքիդ համար կամ իրեն վնաս հասցընելու համար:

Եթէ աղքատաց դէմ անգթութիւն ըրիր, զանոնք ատեցիր, արհամարհեցիր ու վնասեցիր:

Եթէ դատողութեամբ ուրիշին գործքը ծուռ մեկնեցիր, եւ կամ չար կարծիքի գացիր:

Եթէ զուրիշը բամբասեցիր, կամ իրաւ եւ սուտ՝ անուան աւրեցիր, ետեւէն գէշ բաներ զուրեցելով:

Եթէ եղբայրական սիրով չսիրեցիր զուրիշները, եւ ամէնուն բարիք չուզեցիր:

Վեցերորդ եւ իններորդ պատուիրան:

Մն շնար: Մն ցանկար կնոջ ընկեօն քոյ:

Այս պատուիրաններուն դէմ շատ տեսակ մեղքեր կրնան ըլլալ, որոնք պէսպէս պարագայից համար կը զանազանին ու շատ կը տարբերին մէկը մէկէ. բայց ամօթալի նիւթ ըլլալով՝ չի վայլեր մանրամասն խօսիլ: Ուրեմն մտածէ:

Ասոնց դէմ մեղանչեր ես՝

Եթէ գէշ ու աղտողի բաներ մտածեցիր. եթէ կամաւ անանկ մտքերու մէջ կեցար կամ հեշտացար, կամ անոնց հաւանեցար, կամ գործքով ինք իրենդ կամ ուրիշին հետ կատարեցիր:

Եթէ կամաւ մեղք ընելու ցանկացար, եւ այն փափագով մեկուն վըայ աչք ձգեցիր կամ անիկայ սիրեցիր:

Եթէ մարմնական հեշտութեամբ անպարկեշտ գրքեր կարդացիր, կամ եթէ բան մը ըրիր որ զքեզ մեղքի գրգռես: Եթէ չար մտքով տեղ մը գացիր կամ անկէ անցար մէկը տեսնելու եւ հեշտանալու համար. կամ եթէ զինքդ որոգայթի մէջ ձգեցիր մեղանչելու, կամ եթէ երազի մէջ տեսածովդ արթնցած ատենդ հեշտացար:

Վերջապէս ինչ ըլլայ թող ըլլայ, աչքով, ականջով, մանաւանդ ձեռքով եւ մտքով՝ ամէն պզտիկ մարմնական հեշտութեան եւ ցանկութեան համար եղած բաներն այս պատուիրաններուն դէմ են, եւ մեծ մեղք են՝ եթէ կամաւոր եւ հաւանութեամբ ըլլան: Ուստի լաւ պէտք է քննես խղճմտանքդ այս նիւթիս վըայ. եւ ամէն բան, թէ կամաւոր ըլլայ եւ թէ ակամայ, խոստովանահօրդ պէտք է յայտնես:

Եթեմանրոյդ եւ ճասնանրոյդ պատուիրան:

Մի գողանար: Մի ցանկար ամենայնի՝ որ ինչ ընկեռն քոյ է:

Նսոր դէմ մեղանչեր ես՝

Եթէ բան մը գողցար: Նսոր պարագաները պէտք է բացատրել, թէ որչափ էր, կամ եթէ սրբազան բան էր, կամ սուրբ տեղէ էր:

Եթէ ուրիշներուն բանը պահեցիր իրենց կամքին դէմ. կամ ուրիշին բանը ձեռքդ անցնելով՝ քեզի համար պահեցիր:

Եթէ գնած կամ ծախած ատենդ զընկերդ խաբեցիր:

Եթէ անիրաւ վաստակի համար ուրիշին բանն ուզեցիր առնուլ կամ պահել:

Եթէ գործքդ կամ պաշտօնդ լաւ չկատարեցիր, որուն համար որ աւուրչէք կ'առնէիր:

Եթէ անպատշաճ միջոցով բան մը ստացար, որ իրաւամբ չէիր կրնար ստանալ. կամ ուրիշին օգուտն ու շահն անիրաւութեամբ արգիլեցիր:

Եթէ գողութեան ընկեր եղար, կամ գողունի բան գնեցիր, կամ գողին օգնեցիր՝ յորդորելով, գողցածը պահելով, ծախելով, եւ ինչ կերպով որ ըլլայ:

Եթէ աժան կամ պակաս գնով բան գնեցիր ուրիշէն, որ կամ գողութիւն էր, կամ ծախողը կարօտութեան մէջ էր:

Եթէ գտած բանիդ տէրը չփնտոցիր՝ քեզի պահելու համար:

Եթէ պարտքդ վճարելու անփոյթ եղար:

Եթէ վարձքով առածդ խնայելով չգործածեցիր, որով եւ վնաս հասուցիր տիրոջը:

Եթէ փոխ առած բանդ աւրեցիր. կամ լաւն առիր ու դէշը դարձուցիր:

Եթէ ուրիշին առուտուրին վնաս հասուցիր:

Եթէ մէկէ մը չափէ դուրս վարձք ուղեցիր
ծառայութեանդ համար, գիտնալով թէ կարօտ
է քեզի:

Եթէ սուտ ստակ գործածեցիր, կամ չգիտ-
նալով առնելէն ետքը՝ ուրիշին լաւի տեղ տուիր:

Որովհետոյ պատուիրում:

Մի սուտ վկայքը զընկերէ քումմէ:

Ասոր դէմ մեղանչեր ես՝

Եթէ դատաստանի մէջ կամ անկէ դուրս
սուտ վկայութիւն տուիր, կամ զուրիշը ստիպե-
ցիր ասանկ բան ընելու:

Եթէ մահուչափ սուտ մ'ըսիր՝ ընկերիդ
փեսային համար:

Եթէ ուրիշին լաւ անուան աւրեցիր՝ սուտ
ու մուտ կարծիքներով:

Եթէ զուրիշը բամբասեցիր ու զրպարտե-
ցիր՝ չըրած չարութիւնն ըրածի պէս պատմելով:

Եթէ ուրիշին վրայ եղած բամբասանքը
սրտանց մտիկ ըրիր:

Եթէ ուրիշին մեծ ու ծածուկ մեղքը յայտ-
նեցիր:

ԵԿԵՂԵՑԻՈՑ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Առաջին պատուիրում:

Յաւուրս կիւրակէից եւ տօնից տեսնել պատարագ:

Ասոր դէմ մեղանչեր ես՝

Եթէ կիրակի ու տօն օրերն ամենեւին պա-
տարագ չտեսար, կամ տեսար ալ նէ՝ կիսկատար
բան մը, կամ միտքդ վրագ չպահելով:

Եթէ եկեղեցւոյ մէջ անպարկեշտ ասդին
անդին նայելով, մէկին մէկալին հետ խօսելով
կեցար:

Եթէ մարդկան ցուցնելու համար միայն
գացիր պատարագ տեսնելու, եւ ոչ ի փառս
Աստուծոյ:

Երկրորդ պատուիրում:

Պահել զպահս եւ զծոմսպահս հրամայեալս:

Ասոր դէմ մեղանչեր ես՝

Եթէ մեծ պահքը կամ ուրիշ հրամայեալ
պահքերն ու ծոմերը չպահեցիր:

Եթէ չորեքշաբթի եւ ուրբաթ պահքդ
աւրեցիր, կամ ուրիշին պատճառ եղար որ աւրէ:

Եթէ ուրիշին փոյթ չտարիր որ պահէ, երբ
կրնայիր եւ պարտքդ էր:

Երրորդ եւ Չորրորդ պատուիրան:

Ի տարւոջ գոնէ մի անգամ խոստովանի: Հաղորդել
գոնէ ի տարւոջ մի անգամ, այսինքն ի Չատկի:

Ասոր դէմ մեղանչեր ես՝

Եթէ խոստովանանք չեղար կամ Սրբու-
թիւն չառիր, գոնէ տարին անգամ մը Ձատկին
օրերը:

Եթէ եղար, բայց ամբշնայէն կամ ուրիշ
բանի մը համար խոստովանանքի մէջ մահուչափ
մեղք մը պահեցիր, եւ այսպէս՝ խոստովանանքդ
փուճ ըլլալով՝ պարտքդ կատարած չեղար:

Հինգերորդ պատուիրան:

Տալ զտասանորդս ընչեց:

Ասոր դէմ մեղանչեր ես՝

Եթէ ըստ քու կարողութեանդ ողորմու-
թիւն չտուիր աղքատաց:

Եթէ հոգեւոր բաներէն ետ կեցար ստըկի
խնայելու համար, որ կարողութիւն ունէիր եւ
կրնայիր, մանաւանդ թէ պարտական էիր ընել:

ԵՕԹՆ ՄԱՀՈՒՉԱՓ ՄԵՂԱՅ ՎՐԱՅ

Հպարտութիւն ըրի՞

Եթէ չճանչցար թէ ինչ բարիք որ ունիս՝
Ասուածմէ է. հապա կարծեցիր թէ քեզմէ ու-
քու քաջութեամբդ ունեցար:

Եթէ մեղք մ'ընելուդ համար պարծեցար,
կամ բարի բանի մը համար մեծամտեցար:

Եթէ ինք զինքդ հանեցար, եւ զուրիշ
արհամարհեցիր:

Եթէ քու խելքիդ աւելի հետեւեցար,
քան թէ բարի խրատուց ծնողաց, հոգեւոր
հարց, եւ այլն:

Եթէ քու խելացութեանդ, իմաստու-
թեանդ, խոհեմութեանդ, զօրութեանդ ու վաս-
տակիդ վրայ յուսացիր:

Նախանձու մեղք ըրի՞

Եթէ ուրիշն բարիքին վրայ տրամեցար,
կամ անոր վնասին ցանկացար:

Եթէ ուրիշն բարիքը խափանել ջանա-
ցիր, կամ չկրնալով տանիլ եւ կամ քեզի չա-
րիք կարծելով:

Բարկութեամբ մեղար՞

Եթէ սրդողած ատենդ՝ թէ սրտով թէ՛
բերնով զԱստուած կամ սուրբերը կամու նա-
խատեցիր կամ անիծեցիր:

Եթէ սաստիկ վրդովեցար, մինչեւ ըրածդ
ըրածդ չէիր գիտեր կիրքդ ելած ատենը:

Ազահութիւն ըրի՞

Եթէ գնած կամ ծախած կամ ստակ փո-
խած ատենդ, եւ կամ ուրիշ դաշնադրութեան
մէջ մէկը խաբեցիր:

Եթէ շատ հարստութեան ցանկացար:

Եթէ ստրկի մեծ սէր ունեցար:

Եթէ ստրկի խնայելով՝ աղքատներու ողորմութիւն տալու յօժարութիւն չունեցար:

Ծուլութիւն ըրի՞

Եթէ անփոյթ եղար քրիստոնէին պէտք եղածը սորվել կամ սորվեցընել:

Եթէ ծուլութեան համար Աստուծոյ արժանաւոր պատիւ չտուիր, կամ բարի բաներու ազդեցութիւնն արհամարհեցիր:

Եթէ ժամանակդ պարապ անցուցիր, հոգեւոր կամ մարմնաւոր բարի բանի մը ետեւէ չըլլալով:

Եթէ հոգեւոր աղօթքներէն ու ջերմեռանդութիւններէն ձանձրացար, կամ իրիկուն առտու առանց աղօթքի անցուցիր՝ պարզ չաշխատելու եւ ծուլութեան համար:

Որկոսամուլութիւն ըրի՞

Եթէ վերջին վախճանդ ուտելու խմելու վրայ դրիր, ու անկէ մահու չափ մեղքի մը մէջ ինկար:

Եթէ այնչափ կերար խմեցիր, մինչեւ գինովցար ու զքեզ կորսնցուցիր:

Եթէ ասանկ չափէ դուրս ուտելու խմելու բաղձանք ունեցար:

Եթէ անյագաբար եւ սաստիկ ախորժակաւ ուտելով եւ խմելով՝ կերակրոյ ու գինւոյ սէր ձգեցիր:

Եթէ շատ տեսակ անուշահամ ու քաղցր կերակուրներու եւ գինիներու ետեւէ եղար՝ պարզապէս կոկորդի հեշտութեան համար:

Բղշախոհութիւն ըրի՞

Եթէ մարմնական մեղքով մը հեշտացար, ինչ կերպ ըլլայ թող ըլլայ, թէ մաքով թէ խօսքով եւ թէ գործքով: Ամէն մեծ ու պղտիկ մարմնական հեշտութիւն այս մահու չափ մեղքին տակն է. ուստի լաւ պիտի քննես խղճմտանքդ այս նիւթիս վրայ, եւ ամէն մանր պարագաները պիտի յայտնես խոստովանութեան մէջ:

Ասոնց ամէնուն վրայ մտածելէն ետքը՝ ամէն անգամ կրնաս զքեզ ամբաստանել խոստովանութեան մէջ, թէ աստուածային սիրոյ դէմ մեղանչեր եմ, ինչպէս որ պէտք է սիրել, պատուել, յարգել եւ ծառայել Աստուծոյ՝ չըրի ըսելով. որովհետեւ որչափ ընենք՝ միշտ պարտական ենք աւելի ընելու. նոյնպէս ընկերի սիրոյն վրայ ալ. մանաւանդ ըստ քու վիճակիդ քննէ զքեզ. եւ ընկերիդ դէմ պարտքդ ինչ էր նէ, թէ չես ըրած՝ պակաս գտնուեր ես նէ, զղջա ամէն մեղքիդ համար եւ խոստովանէ:

Աջօրն Կրօնն եւ Կրօնաբարութիւնն :

Ամենակալ Աստուած եւ ամենայնի Տէր գերագոյն, Հայր ամենիմաստ ամենաբարի արդար եւ բարեգութ, քեզ երկիր պագանեմ խոնարհաբար, զքեզ պատուեմ եւ յարգեմ. եւ ցանկամ սիրել զքեզ ի բոլոր սրտէ, ի բովանդակ մտաց եւ յամենայն զօրութենէ իմնէ ի վեր քան զամենայն: Այն ինձ, զհարգ անօրինեալ Հեռացայ ի քէն, Աստուած իմ եւ Տէր: Եւ ահա ճանաչեմ ըստ կարի զսխալանս իմ, եւ զորս խորհրդով, բանիւ եւ գործով եւ զանցառութեամբ յանցեայ ընդդէմ ահեղ Աստուածութեան քոյ: Ասան որոյ զղջամ իսկապէս, եւ վշտագին թախծանօք ապաշաւեալ ցաւիմ ի բոլոր սրտէ դառնաղէտ կսկծանօք ի վերայ ամենայն մեղաց, որովք զաստուածային մեծվայելչութիւն քո զայրացուցեալ վշտացուցի. եւ այսօր գարշիմ ի նոցանէ զայրագին զգուանօք, եւ փութամ ցայն վայր սաստիկ ատելութեամբ զինել դիմամարտ, մինչեւ չընծայել երբեք միւում ի նոցանէ հաւանութիւն միւսանգամ: Եւ քանզի դու միայն ես Հայր ողորմութեան եւ Աստուած ամենայն մխիթարութեան, հայցեմ խոնարհաբար ի քու մէկ մարդասիրութենէ ներել իմոց բազմապիսի մեղացս յանցանաց, վասն արդեանց չարչարանաց Փրկչին իմոյ եւ անգինարեան Որդւոյ քոյ սիրելւոյ. եւ ապաւինեալ ի շնորհաց Հոգւոյդ սրբոյ

օժանդակութիւն, յառաջագրեմ հաստատութեամբ սրտի պահել այսուհետեւ զամենայն պատուիրանս քո սուրբ, եւ հեռանալ փախել յամենայն առ թից մեղաց, եւ պատրաստել զանձն իմ մանաւանդ մեռանել՝ քան միւսանգամ մեղանչել եւ վշտացուցանել զքեզ: Ասան որոյ մատչիմ այժմ առ ոտս քո՝ ամենայն յանցանաց իմոց առնել զխոստովանութիւն կատարեալ, եւ յօժարակամ սրտիւ զառաջագրեալ ինձ ի խոստովանութեան զապաշխարութիւն լիով կատարել: Եւ զի չունիմ ինչ քեզ վերընծայել առ վճարողական բաւականութիւն իմոցս պարտեաց, զիս բոլորովին հոգեւոր եւ մարմնաւոր կարողութեամբ ի պատարագ ընդունելի, եւ զամենայն ինչ զոր կրեմ եւ գործեմ ի փառս մեծիդ Աստուծոյ նուիրեալ, մաղթեմ ընդունել ընդ պատարագի խաչին զընծայս շնչին ի միութիւն արդեանց Որդւոյ քոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ որում քեզ Հօր եւ Հոգւոյդ սրբոյ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աջօրն Խոստովանութիւնն Եւսեմ:

Ով բարեգութ Տէր իմ Յիսուս Քրիստոս, աղաչեմ զքեզ ի բոլոր սրտէ եւ ի բովանդակ մտաց, ընկալ զխոստովանութիւն իմ զոր կամիմ առնել այսօր առաջի մեծվայելչութեան քոյ. եւ սուր ինձ զճմարիտ եւ զկատարեալ զղջումն

ողբալ զամենայն մեղս եւ զյանցանս իմ: Ո՛վ ամենաքաղցր Յիսուս, առաքեա ի հոգի իմ եւ ի միտս՝ զլոյս ճշմարտութեան քոյ, զի առաջնորդեալ ուսուսցէ զիս կարող լինել յայս ահաւոր խորհուրդ պաշխարութեան՝ բեկեալ սրտիւ, կատարեալ սիրով եւ ջերմեռանդն հոգւով մատչել, եւ պատմել առաջի քո մի ըստ միովէ զամենայն մեղս եւ զյանցանս իմ, զի ընկալեալ զբաւուրթիւն մեղաց եւ զթողութիւն յանցանաց արդեամբք ամենասուրբ չարչարանաց քոց, արժանի եղէց փառաւորել զանուն քո սուրբ ի յաւիտեանս. ամէն:

Խոստովանութեան սկիզբը:

Խոստովանիմ առաջի Աստուծոյ ամենակարողի եւ երանուհի Մարիամու միշտ կուսին, երանելոյն Միքայէլի հրեշտակապետին, երանելոյն Յովհաննու մկրտչին, սրբոց առաքելոցն Պետրոսի եւ Պողոսի, եւ ամենայն սրբոց, եւ առաջի քո Հայր սուրբ. քանզի մեղայ յոյժ խորհրդով, բանիւ եւ գործով. վայ ինձ, վայ ինձ, եւ յաւէտ վայ ինձ:

Աղօթի խոստովանութեան երէց:

Նշնցի քեզ, Տէր, աղերսեմ՝ հաճելի եւ ընդունելի այս խոստովանութիւն իմ արդեամբք ամենօրհնեալ ծնողի քոյ Մարիամու միշտ կուսին եւ ամենայն սրբոց քոց. եւ եթէ պակասեցայ

իւրիք ի պահանջելոցն առ բաւականութիւն զըղման, առ պարզութիւն արտաբերութեան եւ առ ամբողջութիւն խոստովանութեան յայսմ՝ կամ յայլում նուազի, լցցէ գթութիւն քո եւ ողորմութիւն, զի մարդասիրութեամբ քով յամենայն մասնակցութենէ մեղաց խորհրդոց, բանից եւ գործոց՝ յերկինս եւ յերկրի արձակել զիս հաճեսցիս Քրիստոս Աստուած, որ կենդանի ես եւ թագաւորես ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյդ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղօթի:

Ո՛վ Տէր իմ, Աստուած իմ եւ փրկիչ իմ Յիսուս Քրիստոս, ընկալ աղաչեմ շնորհիւ ողորմութեան քո զխոստովանութիւն իմ, զոր արարի այսօր առաջի մեծ վայելութեան փառաց անուան քոյ. եւ զպակասութիւնս իմ, որովք պակասեցայ ի նմա՝ լցո ամենառատ գթութեամբ քով. եւ շնորհեա ինձ զնեղումն ամենայն յանցանաց իմոց, զի արժանի եղէց ընդունել զկենարար մարմին եւ զարիւն քո սուրբ ի փառս Աստուծոյ եւ ի փրկութիւն հոգւոյ իմոյ. ամէն:

Աղօթի Հաղորդութեան յառաջ:

Ո՛վ Տէր իմ Յիսուս Քրիստոս, արդարեւ չեմ բաւական ընդունել զքեզ. այլ վասն կարօտութեան իմոյ գամ առ քեզ, զի հիւանդութիւն իմ քեւ բժշկեսցի, խաւար մտաց իմոց քեւ

լուսաւորեցի, աղքատութիւն իմ քեւ մեծացի, եւ գործք իմ բարիք քեւ լիցին արդուսաւոր:

Յիշեա՛ Տէր, զի զքեզ ետուր ի մահ վասն իմ, եւ զմարմին եւ զարիւն քո բաշխեցեր ի փրկութիւն իմ. մի լիցին սոքա ինձ ի դատապարտութիւն, այլ ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց, յառողջութիւն հոգւոյ իմոյ, եւ ի հանդերձեալ երանութիւն իմ, մինչեւ տեսից զքեզ գէմյանդիման, եւ զմայլեցայց փառօք Աստուածութեան քոյ ի յաւիտեան. ամէն:

Աղօթիւք Սրբոյն Օրհնարինոսի:

Տէր իմ Յիսուս Քրիստոս, ծանեայց զիս եւ ծանեայց զքեզ: Մի լիցի ինձ բաղձալ իմիք՝ բայց եթէ քեզ, որպէս զի կարացից ատել զիս, եւ սիրել զքեզ. խոնարհեցուցանել զիս, եւ բարձրացուցանել զքեզ. ոչինչ խորհել՝ բայց եթէ զքեզ. մեռանել յիս, եւ կենդանի լինել ի քեզ. եւ զամենայն պատահար ընդունել ի սէր քո ի քէն. արհամարհել զիս, եւ հետեւել քեզ, եւ միշտ զնոյն բաղձալ. փախչել յինէն, եւ առ քեզ դիմել, եւ պաշտպանութեանց քոց արժանի լինել: Տուր ինձ Տէր զերկիւղ քո սուրբ, երկնչել ի քէն իբրեւ որդի ի հօրէ, տարածայնիլ ախտից իմոց, եւ համաձայնիլ քեզ. հնազանդել ամենայն մարդկեղէն ստեղծուածոյ վասն քո, եւ մտանել ի թիւս ընտրելոց քոց: Ընորհեա ինձ

Տէր ոչինչ իւրք բերկրել, բայց եթէ քեւ. զայլ ոչինչ սիրել, բայց եթէ զքեզ, զի տեսանել զքեզ եւ ընդ սուրբս քո զմայլել քեւ արժանացայց ի յաւիտեան. ամէն:

Աղօթիւք Հաղորդոթիւնէ երոբ:

Ո՛վ Տէր իմ Յիսուս Քրիստոս, հաց կենդանի, եւ պարգեւելչ կենաց մարդկան, սրտի մտօք շնորհակալ եմ զանբաւ մարդասիրութենէդ քումմէ, որ արժանի արարեր զիս զմահու պարտականս հաղորդ լինել կենաց՝ կենարար մարմնոյ եւ արեան քոյ սրբոյ ճաշակմամբ: Եւ արդ՝ արա աղաչեմ Տէր, զի լիցի ինձ սա ի զէն հաւատոյ մտաց իմոց, եւ ի վահան ամրութեան կամաց իմոց, ի լրումն աստուածային սիրոյ եւ պատուիրանաց, յապաքինութիւն յամենայն ախտից, ի ծաղկումն համայն առաքինութեանց. եւ յապտութիւն յիւրաքանչիւր գրգիռ փորձութեան, զի ի քեզ եւ ի ճանապարհս արդարութեան քոյ խնդամիտ զուարթացեալ՝ աճապարեցից յերկնային հարսանիս քո, փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյդ, որ ես լոյս ճըմարիտ, կեանք, քաղցրութիւն եւ յոյս ի յաւիտեան. ամէն:

Ա Ղ Օ Թ Ք Ա Ռ Ա Ի Օ Տ Ե Ա Ն

Խաչաբնիկս զիեղ եւ աստ:

Տէր, եթէ զըրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս քո:

Չամենայն դործս զորս գործեմ այսօր՝ ցանկամ Տէր կարգել ի փառս քո:

Երկիր պագանեմ քեզ Յիսուս Քրիստոս Աստուած իմ եւ օրհնեմ զքեզ, որ խաչիւզ քով սրբով փրկեցեր զաշխարհ, աղաչեմ զքեզ, պահեա զիս այսօր ամենազօր աջովդ քով, զի մի մեղայց քեզ խորհրդով կամ բանիւ կամ գործով եւ կամ զանցառութեամբ:

Հրեշտակ Տեառն աւետեաց կուսին Մարիամու, որ յղացաւ ի Հոգւոյն սրբոյ: Ողջոյն քեզ:

Ահաւասիկ կամ աղախին Տեառն, եղևցի ինձ ըստ բանի քում: Ողջոյն քեզ:

Եւ Քանն մարմին եղիւ եւ բնակեաց ի մեզ: Ողջոյն քեզ:

Աղաչեա փասն մեր սուրբ Աստուածածին, զի արժանի լիցուք խոստմանցն Քրիստոսի:

Չքնորհս քո, աղաչեմք Տէր, հեղ ի միտս մեր, զի որ աւետեօք հրեշտակին զՔրիստոսի որդւոյ քոյ զմարդեղութիւնն ծանեաք, չարչարանօք նորին եւ խաչիւ ժամանեցուք ի փառս յարութեան: Կովլն Քրիստոսիւ Տերամբ մերով ամէն:

Հայր ամենակալ Աստուած յաւիտեանական, աւասիկ տարածեալ զանձն իմ առաջի անչափ մեծութեան փառաց քոց խոնարհութեամբ երկիր պագանեմ քեզ, եւ մատուցանեմ Տեառնդ իմում այսօր զամենայն զխորհուրդս, զբանս եւ զգործս իմ, եւ ցանկամ առնել զամենայն ինչ ի սէր քո եւ ի փառս անուան քոյ, ի ընուլ զաստուածային կամս քո, ի պաշտել, յօրհնել եւ ի փառաւորել զքեզ:

Եւ արդ, Տէր բարերար, ընկալ զյօժարութիւն սրտի իմոյ, եւ օժանդակ լեր տկարութեան եւ տարտամութեան իմում, եւ կենարար հեղմամբ արեան Միածնի քոյ՝ պողաբերեա յանդաստանի սրտի եւ կամաց իմոց զկենդանի գործս բարեաց, ի փրկութիւն իմ եւ ի հատուցումն աստուածային արդարութեան քոյ յաղագս մեղաց իմոց:

Յաննաբարսեղիս աստուգ կոյսն Մարիամ:

Ամենասուրբ կոյս Մարիամ մայր Աստուծոյ, թագուհի երկնից, բարեխօսդ մեղաւորաց եւ ապաւէնդ նեղելոց, ես թէպէտ չեմ արժանի լինել ծառայ քո, բայց ստիպեալ ի փափագանաց ծառայելոյ քեզ, եւ ապաւինեալ ի հզօր զօրութիւնդ քո, ընտրեմ զքեզ այսօր առաջի պահապան հրեշտակի իմոյ եւ ամենայն երկնային զօրաց ինձ սեփական տիրուհի, նպաստ եւ մայր. եւ յօժարեալսմ սրտիւ մատուցանեմ զանձն իմ

ի Հանապաղորդ ծառայութիւն քո. եւ փափա-
գիմ, զի զսոյն եւ այլք արասցեն:

Արդ խնդրեմ ի քէն, մայր բարեգութ,
միջնորդութեամբ կենարար արեան Որդւոյ քոյ
միածնի Հեղոյ յերկիր վասն իմ, ընդունել զիս
ի թիւ բարեպաշտ պաշտօնասիրաց քոց ի մշտըն-
ջենաւոր ծառայ, եւ առաջնորդել ինձ ի գործս
իմ: Միջնորդեա վասն իմ առ Յիսուս՝ տալ ինձ
շնորհս, որով Հաճոյ եղէց յամենամաքուր աչս
քո եթէ խորհրդով, եթէ բանիւ եւ եթէ գոր-
ծով. եւ առաջի դատաւորին իմոյ եւ փեսայի եւ
քոյ միածնի դտայց անարատ: Յիշեա զիս, մայր
ողորմութեան, եւ մի ընկենուր յերեսաց քոց ի
ժամու մահուան իմոյ, մինչեւ մեկնեսցի Հոգիս ի
մարմնոյ աստի տառապանաց ճշմարիտ ապաշխա-
րութեամբ յանցանաց իւրոց. ամէն:

Անկանիմք առաջի քո Աստուածածին, եւ
աղաչեմք զանարատ զկոյսդ: Բարեխօսեա վասն
անձանց մերոց, եւ աղաչեա զմիածին Որդիդ:
Փրկել զմեզ ի փորձութենէ, եւ յամենայն
վտանգից մերոց:

Աղօթիւ առ Պահապան Էրեշտոմէն:

Աղաչեմ զքեզ, ո՛վ Հրեշտակ իմ պահա-
պան, որ կարգեալ ես ի ծննդենէ իմմէ ի խնա-
մոցն Աստուծոյ առ ի պահպանութիւն եւ ի նա-
խախնամութիւն անձին իմոյ անարժանի. զի պա-
հասցես զիս այսօր ի պատրանաց թշնամոյն, զոր

օրինակ պահեցեր յայսմ գիշերիս. եւ տացես
ինձ զօրութեամբ սրբոյ խաչին յաղթահարել
զամենայն ցանկութիւն մարմնական, զամենայն
Հպարտութիւն կենցաղոյս եւ զամենայն խաբէու-
թիւն Հնոյ օձին. ամէն:

Աղօթիւ առ Պաշտպան Կոնստանտին:

Ո՛վ երանեալ եւ փառաւորեալ Սուրբ
(անուն), փաստաբան եւ սիրելի խնամակալու իմ,
զոր ընտրեցի ինձ պաշտպան եւ բարեխօս, յանձն
առնեմ զիս ի բոլոր սրտէ քոյք Հզօր Հովանաւո-
րութեան, եւ աղաչեմ խոնարհաբար՝ Հայցել
յԱստուծոյ վասն իմ զթողութիւն մեղաց եւ
զյարաստելութիւն ի գործս բարեաց: Ո՛վ երջա-
նիկ սուրբդ Աստուծոյ, լեր ինձ ձեռնտու այսօր
եւ զամենայն աւուրս կենաց իմոց՝ առ ի աղա-
տել զիս յամենայն վտանգից Հոգւոյ եւ մարմնոյ,
եւ պահել յամենայն առթից վշտացուցանելոյ
զՏէր. զի քոյով օժանդակութեամբ կեցեալ
բարի վարուք մինչեւ ցվախճան, եւ բարեհրաւէր
մահուամբ, զինեալ սուրբ խորհրդովք Եկեղեցւոյ,
քոյով առաջիկայութեամբ ելից ի կենաց աստի,
եւ ի ձեռն բարեխօսութեան քոյ արժանի եղէց
ուրախանալ ընդ քեզ ի փառս երկնից ար-
քայութեան, արդեամբք չարչարանաց Տեառն
մերոյ Յիսուսի ֆրիստոսի. Ամէն:

Աղբիւրք Սրբոյն թովմոյն Անդրեանոյ վասն
նահապետից:

Արարիչ անձառելի, որ ի գանձուց իմաստութեան քոյ զերիս քահանայապետութիւնս հրեշտակաց հաստատեցեր, եւ զնոսա ի լուսեղէն խորանսն երկնից հրաշտափառապէս դասակարգեցեր, միանգամայն եւ զամենայն տիեզերս վայելչապէս հանդերձեցեր. եւ որ եսդ ճշմարիտ լուսոյ եւ իմաստութեան աղբիւր, եւ գերագոյն նախասկիզբն, հեղ ի խաւարեալ միտս իմ զնշոյլս պայծառութեան, եւ փարատեցո յանձնէ իմմէ զկրկնակի խաւարն բնածին, զմեղս եւ զանգիտութիւն: Գու՛ որ զլեզուս տղայոց դնես պարզախօս, վարժեա զլեզու իմ, եւ լից օրհնութեամբ շնորհաց քոց զշրթունս իմ: Տուր ինձ զգորութիւն պահելոյ, զկորովամտութիւն մեկնելոյ, զգիւրընկալութիւն ուսանելոյ եւ զամենառատ շնորհս խօսելոյ: Կազմեալ յարդարեա զմուտս իմ, ուղղեա զգնացս իմ, եւ կատարեա զելս իմ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. ամէն:

Ա Ղ Օ Թ Ք Ե Ր Ե Կ Ո Յ Ե Ա Ն

Հրեշտակ Տեառն. (Երեւ 64:)

Անբաւելի բարութիւն, սրտի մտօք գոհանամ զքէն ի վերայ ամենայն բարերարութեանց քոց, զորս առ իս անարժանս երեւեցուցեր զա-

մենայն աւուրս կենաց իմոց, եւ մանաւանդ այսօր ինսամարկեցեր զիս հոգեւոր եւ մարմնաւոր կերակրովք առատապէս, եւ ամբողջ անասան ժամանեցուցեր յայս ժամ երեկոյիս: Եղիցի քեզ օրհնութիւն եւ փառք յամենայն ընտրելոց քոց յերկինս եւ յերկրի, եւ յամենայն արարածոց յաւիտեանս յաւիանից. ամէն:

Եւ արդ, Տէր ամենակալ, եթէ արարի ինչ բարի այսօր առաջի քո՛ ի քէն է այն. ուստի զքոյսն ի քոյոցս քեզ մատուցանեմ. իսկ եթէ չար՝ այն յինէն է: Վասն որոյ աղաչեմ զքեզ, բաց զմիտս իմ, զի ծանեայց զյանցանս իմ, զորս խորհրդով, բանիւ եւ գործով արարի ընդդէմ մեծվայելութեան քոյ: Լոյս տուր Տէր աչաց իմոց, զի մի երբեք ննջեցից ի մահ:

Յետ այսոքի զորս առ զամենայն մեղս քո, զոր սրբելի յարարեալ մնելն յերեկոյ, եւ զգլուխսս:

Յաւիմ Տէր վասն սիրոյ քոյ ի վերայ այսչափ անօրէնութեանց՝ զորս արարի այսօր արհամարհելով զանչափ բարութիւն քո, յառաջագրեմ այսուհետեւ ոչ եւս մեղանշել, եւ զգուշանալ ի մեղաց, (մանաւանդ յայս ինչ մեղաց եւ յառթից նորա:) Եւ քանզի չեմ կարող զայս առնել յինէն, ուստի աղաչեմ, առաքեա առ իս զնորհս քո սուրբ, որով զօրեցից կատարել: Յանձն առնեմ քեզ Տէր ի պահպանութիւն զհոգի եւ զմարմնս իմ:

Աղաչեմ եւ զքեզ մայր Աստուծոյ, եւ զսուրբ Տրեշտակդ իմ պահապան, զպաշտպան սուրբդ իմ, եւ զամենայն սուրբս՝ որ անդադար օրհնէք զԱստուած, մինչ ես սակաւիկ ինչ հանգչեմ ննջելովս, դուք ինամեսջիք զիս, եւ յանձն արասջիք Աստուծոյ, զի պահեսցէ զիս յայսմ գիշերիս յորոգայթից թշնամեաց իմոց՝ որք ի ննջելն մեր միշտ տքնին՝ պատրաստ ի վնասել մեզ:

Եղիցի Աստուած պաշտպան իմ, եւ ոչինչ հակառակութիւն մեղիցէ մեզ:

Աղջիտ աստուծոյ կոյսն:

Սրբուհի կոյս Մարիամ, ամենաքաղցր թագուհի շնորհաց, բարեխօսք մեղաւորաց, եւ ապաւէնդ նեղելոց. հայեաց գթութեամբ ի մաղթմանս անարգ ծառայի քոյ, եւ համարեա զիս ի թիւս սիրելեաց քոց, եւ ամիոյիեա զիս ի կուսական գիրկս քո: Ո՛վ ամենամաքուր կոյս, մաքրեա զսիրտ իմ յամենայն մեղաց, ընկեա եւ թօթափեա յինէն զամենայն որ ինչ ոչ է հաճոյ առաջի աչաց քոց. սրբեա զսիրտ իմ յամենայն երկրաւոր ցանկութեանց, եւ վերացո զմիտս իմ ի սէր երկնային եւ յաւիտենական բարեաց: Ո՛վ ամենասուրբ կոյս, բարեխօս լեր վան իմ առ Որդիդ քո սլոժմ եւ միշտ եւ ի ժամու մահուան իմոյ, զի միջնորդութեամբ քով ապրեցայց ի յաւիտենական հրոյն, եւ յեա աստեացս թշուառութեան քեւ զմայլեցայց ի

դրախտին: Եւ արդ՝ մի դարձուցաներ յինէն զաչ շնորհաց քոց, ո՛վ ամենամաքուր տիրուհի եւ կոյս, զի ի գթութիւն քո զհոգի եւ զմարմին իմ առնեմ ապաստան:

Փութացիր փրկել զիս յամենայն չարեաց եւ ի կասկածանաց աստեաց կենցաղոյս, եւ լնր բարեխօս վասն իմ առ Որդիդ քո միածին՝ շնորհել ինձ զթողութիւն յանցանաց, զհաւատս ճշմարիտ, զլոյս հաստատուն, զեռանդն սիրոյ, եւ զշնորհս Հոգւոյն սրբոյ՝ ի ընու զամենասուրբ հաճութիւն կամաց իւրոց. եւ գթացի պահել զքաղաքս զայս ի պատերազմէ, ի մահտարաժամէ եւ ի սովէ. եւ ազատեսցէ զիս եւ զամենայն ազգս եւ զբարեկամս իմ եւ զամենայն հաւատացեալ քրիստոնեայս յամենայն չարէ. ամէն:

Եւ ասեալ զընդ օրհնութեան՝ խաչմինելով սրբիս զանկողնօք, Եւ ասաւ.

Յօղեա յիս մշտեալ, եւ սուրբ եղէց. լուս եւ քան զձիւն սպիտակ եղէց:

Խաղաղութեամբ յայս եւ ի սոյն ննջեսցուք եւ զարթիցուք, զի դու Տէր միայն առանձինն յուսով քով բնակեցուցեր զմեզ:

Եւ զի ի հուն Գրեալ՝ Գրածեա զարարանս Յիսուսի համայն ինչ հոգեւոր:

ԱՅԼ ԱՂՕԹՔ ԵՐԵՎՈՅԵԱՆ

Կ-ի աս շրջանակ Տեառն. (Երեւ 64):

Հաւատով խոստովանիմ եւ երկիր պահանեմ քեզ, Հայր եւ Որդի եւ սուրբ Հոգի. անեղ եւ անմահ բնութիւն, արարիչ Տրեշտակաց եւ մարդկան եւ ամենայն եղելոց. եւ ողորմեա քո արարածոցս:

Հաւատով խոստովանիմ եւ երկիր պահանեմ քեզ, անբաժանելի լոյս, միասնական սուրբ Երրորդութիւն եւ մի Աստուածութիւն, արարիչ լուսոյ եւ հալածիչ խաւարի. հալածեա ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց եւ անգիտութեան, եւ լուսաւորեա զմիտս իմ ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ի հաճոյս, եւ ընդունել ի քէն զլնդրուածս իմ. եւ ողորմեա ինձ բազմամեղիս:

Հայր երկնաւոր Աստուած Ճշմարիտ, որ առաքեցեր զՈրդիդ քո սիրելի ի խնդիր մոլորեալ ոչխարին. մեղայ յերկինս եւ առաջի քո. ընկալ զիս որպէս զանառակ որդին, եւ զգեցո ինձ զպատմուածանն զառաջին, զոր մերկացայ մեղօք. եւ ողորմեա քո արարածոցս եւ ինձ բազմամեղիս:

Որդի Աստուծոյ Աստուած Ճշմարիտ, որ խոնարհեցար ի հայրական ծոցոյ, եւ առեր մարմին ի սրբոյ կուսէն Մարիամայ վասն մերոյ փրկութեան. խաչեցար եւ թաղեցար, յարեար ի մեռելոց եւ համբարձարար առ Հայր. մեղայ յերկինս եւ

առաջի քո. յիշեա զիս որպէս զաւաղակն յորժամ գաս արքայութեամբ քով. եւ ողորմեա քո արարածոցս եւ ինձ բազմամեղիս:

Հոգի Աստուծոյ Աստուած Ճշմարիտ, որ իջեր ի Յորդանան եւ ի վերնատունն. եւ լուսաւորեցեր զիս մկրտութեամբ սուրբ աւաղանին, մեղայ յերկինս եւ առաջի քո. մաքրեա զիս վերլուսին աստուածային հրով քով որպէս հրեղէն լեզուօք զառաքեալն. եւ ողորմեա քո արարածոցս եւ ինձ բազմամեղիս:

Երեւ Ողջոյն եւ երեւ Հայր մեր ի քուս եւ ի պարիսպանս Երրորդութեան:

Սուրբ Աստուած, Սուրբ եւ հզօր, Սուրբ եւ անմահ ողորմեաց մեզ: Երեւ կրիստոս:

Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ մայր Քրիստոսի, մատուցողաչանս մեր Որդւոյ քոյ եւ Աստուծոյ մերոյ: Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ: Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Լիւսնիւ Սուրբ Աստուածածնի:

Տէր ողորմեաց:

Քրիստոս ողորմեաց:

Տէր ողորմեաց:

Քրիստոս լուր մեզ:

Քրիստոս անսա մեզ:

Հայր երկնաւոր Աստուած, ողորմեաց մեզ:

Որդի փրկիչ աշխարհի Աստուած. ողոր:

Աղբիւ:

Աստուած անճառելի ողորմութեան. որ ոչ միայն մարդ, այլեւ որդի մարդոյ լինել հաճեցար. եւ ծնանելով ի կուսէ՝ զմայր ի յերկրի ստացար որ զԱստուած ունէիր հայր ի յերկինս. տուր մեզ աղաչեմք զյիշատակ նորա յօժարութեամբ կատարել, զմայրութիւննորա գերագոյն յարգանք պատուել. գերազանցագոյն վսեմութեան նորա զմեզ խոնարհութեամբ հպատակել, որ զքեզ Հոգւով սրբով յղացաւ, զքեզ կուսութեամբ ծնաւ, եւ զքեզ ի յերկրի ինքեան հնազանդ կալաւ, զՏէրդ մեր Յիսուս Քրիստոս: Ար կենդանի ես եւ թագաւորես ընդ Հօր եւ ընդ սրբոյ Հոգւոյն ի յաւիտեանս. ամէն:

Ընդ հովանեաւ պաշտպանութեան քոյ ապաւինիմք, սուրբ Աստուածածին, մի անտես առներ զաղաչանս մեր ի կարիս մեր, այլ փրկեալ զմեզ յամենայն վտանգից, փառաւորեալ եւ օրհնեալ միշտ կոյս:

Աղջ լեր թագուհի, մայր ողորմութեան, կեանք, քաղցրութիւն, եւ յոյս մեր, ողջ լեր: Առ քեզ գոչեմք աքսորեալ որդիքս Եւայի. առ քեզ հառաչեմք հեծելով եւ ողբալով յայսմ արտասուաց վայրի: Արդ ո՞վ բարեխօս մեր, դարձո առ մեզ զաչս ողորմութեան քոյ. եւ զՅիսուս զօրհնեալ պտուղն որովայնի քոյ յետ այս աքսորանաց ցոյց մեզ. ո՞վ գթած, ո՞վ բարեգութ,

ո՞վ քաղցր կոյս Մարիամ: Աղաչեա վասն մեր սուրբ Աստուածածին, զի արժանի լիցուք խոստմանցն Քրիստոսի:

Սաղմոս վասն նշնցելոց:

Ի խորոց կարգացի առ քեզ Տէր, Տէր լուր ձայնի իմում:

Եղիցին ականջք քո ի լսել զձայն աղօթից իմոց:

Թէ զանօրէնութիւնս քննես Տէր. Տէր ո՞ կարէ կալ առաջի քո, զի ի քէն է քաւութիւն:

Վասն անուան քոյ համբերի Տէր. համբեր անձն իմ բանի քում. յուսացաւ անձն իմ ի Տէր:

Ի պահէ առաւօտու մինչեւ յերեկոյ, ի պահէ առաւօտու յուսացաւ Խորայէլ ի Տէր:

Ի Տեառնէ է ողորմութիւն բաղում, եւ ի նմանէ է փրկութիւն. եւ նա փրկեաց զԽորայէլ յամենայն նեղութեանց նորա:

Չհանգիստ յաւիտեանական պարգեւեամ նոցա Տէր:

Եւ լոյս մշտնջենաւոր ծագեսցէ ի նոսա, հանգիցեն ի խաղաղութեան. ամէն:

Հոգւոյն հանգուցելոց Քրիստոս Աստուած արա հանգիստ եւ ողորմութիւն:

Եւ մեզ մեղաւորացս շնորհեալ զթողութիւն յանցանաց:

Մարիամ կոյս, եւ մայր շնորհաց.
 եւ շնորհալի մայր գրթութեանց.
 Ի ժամ մահուան ընկալ ըզմեղ,
 եւ պաշտպանեալ ի թշնամեաց:

Սուրբ կաթն կուսին. Անգին արիւն Յիսուսին. Միջնորդ լինիցին. Մեղք մեր ջնջեցին:
 Յիսուս, Մարիամ, սուրբ հայր Յովսէփ, զսիրտս եւ զհոգիս եւ զմարմինս իմ ձեզ յանձն առնեմ: Երէն իբնեւ Բարեբալ զհորթս:

Ե- ի վիճակի սառ:

Փառք քեզ Տէր Աստուած մեր, որ պարգեւեցեր զօրս բարեաւ եւ խաղաղութեամբ անցուցանել: Մարգասէր Աստուած, զառաջակայ գիշերս՝ որ ի վերայ մեր դալոց է, ի մեղաց փրկեա, ի չարեաց ազատեա, ի գործս բարիս առաջնորդեա: Առաւօտու օրհնութեանցն եւ փառաբանութեանցն արժանի արա զամենայն հաւատացեալս անուանդ բում սրբոյ, եւ պահեա ի խաղաղութեան:



Յ Ա Ն Կ

Քրիստոնեական վարդապետութիւն:

	Երես.
ԳԼ. Ա. Յաղագս Քրիստոնեայ անուան	5
ԳԼ. Բ. Յաղագս Աստուծոյ կամ Սուրբ Երրորդութեան	7
ԳԼ. Գ. Յաղագս Մարդեղութեան Որդւոյն Աստուծոյ	10
ԳԼ. Դ. Յաղագս Եկեղեցւոյ Քրիստոսի	16
ԳԼ. Ե. Յաղագս վերջնոց մարդոյն	18
ԳԼ. Ջ. Յաղագս պատուիրանացն Աստուծոյ եւ Եկեղեցւոյ	20
ԳԼ. Է. Յաղագս մեղաց	22
ԳԼ. Ը. Յաղագս շնորհաց	23
ԳԼ. Թ. Յաղագս Խորհրդոց Եկեղեցւոյ ընդհանրապէս	25
ԳԼ. Ժ. Յաղագս Խորհրդոց սուրբ Եկեղեցւոյ ի մասնաւորի	28
ԳԼ. ԺԱ. Յաղագս աղօթից	32
ԳԼ. ԺԲ. Յաղագս առաքինութեան	34
ԳԼ. ԺԳ. Յաղագս գործոց ողորմութեան	38
ԳԼ. ԺԴ. Յաղագս ներողութեանց	39

Յ Ս Ի Ե Լ Ո Ւ Ա Ճ

Ապաշխարութեան խորհրդոյն վրայ:

Խրատ ապաշխարութեան Խորհրդոյն վրայ	41
Բննութիւն եղծի մտաց Աստուծոյ պատուիրաններուն վրայ	44
Եկեղեցւոյ պատուիրաններուն վրայ	53
Եօթն մահուչափ մեղաց վրայ	54
Աղօթք զղբման եւ առաջադրութեան	58
Աղօթք խոստովանութենէ յառաջ	59
Խորհրդանիւս առ-լի Առաքելոց	60

-23000-

Երև.

Աղօթք խոստովանութենէ ետքը	60
Աղօթք Հաղորդութենէ յառաջ	61
Աղօթք Հաղորդութենէ ետքը	63

Առառուեան աղօթք:

Երկրպագութիւն, նուիրումն, եւ այլն	64
Հրէշտիկ Տեառն	64
Յանձնարարութիւն առ սուրբ Աղյան Մարիամ	65
Աղօթք առ Պահպան Հրեշտակն	66
Աղօթք առ Պաշտպան սուրբն քո	67
Աղօթք վասն սևուռմասիրաց	68

Երեկոյեան աղօթք:

Շնորհակալութիւն	68
Զղջումն, եւ Յանձնարարութիւն	69
Աղօթք առ ամենասուրբ Աղյան	70

Այլ աղօթք երեկոյեան:

Հաւարակ Իսաբուհի (5 տուն.) եւ այլ մանր աղօթք	72
Լիթանիա սուրբ Աստուածածնի	73
Այլ Աղօթք առ սուրբ Աստուածածինն	76
Ի Իւրոյ Իւրեղնի, եւ աղօթք վասն ննջեցելոց	77
Պարձեալ մանր աղօթք	78



ՀՀ Ազգային գրադարան



NL0822858

1
879